

399

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն
ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

ԳՅՈՐԳԷՆ ԷԳՈՒԵԱՆ



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՈՒԱ» Մոսկվայի պիր. № 8.

1917


371.95

5-16



Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ր Բ Ա Ն Ո Ց Ն Ե Ր

ՅՏՈՒԳԱՄ Է 1961 Ք.




Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուզեյսկի պեր. № 8.

1 9 1 7

Handwritten text in a non-Latin script, possibly Georgian or Armenian, appearing as a faint watermark or bleed-through from the reverse side of the page.



A $\frac{\pi}{12277}$

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Զեկուցում Հայկական Կենտրոնական Կոմիտէին

1916 թուի յունիսի 12-ին հրաւիրուեցի Կոմիտէիդ կողմից որբանոցների տեսչի պաշտօնով: Այդ օրուանից սկսած մինչև նոյն տարուայ օգոստոսի վերջը շրջագայել եմ զանազան տեղեր և մօտիկից ծանօթացել որբանոցների ներկայ վիճակին: Այդ որբանոցների մասին հաւաքել եմ տեղեկութիւններ, որը վերամշակած ձևով ներկայացնում եմ Կոմիտէիդ քննութեանը:

Մինչև այժմ հղել եմ 55 որբանոցում, որոնք զանազան ընկերութիւնների հսկողութեան տակ են: Կենտրոնական Կոմիտէի հսկողութեան տակ եղողները՝ Թիֆլիսում 3 հատ, Դիլիջանում՝ 11 որբանոց, Ալէքսանդրապոլում՝ 2 հատ. բոլորը միասին 16 հատ: Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. սնունդով՝ Ալէքսանդրապոլում 2 որբանոց, Ախալքալաքում՝ մէկ, Ախալցխայում՝ մէկ, Գանձակում՝ մէկ, Ղարսում՝ մէկ, Նոր-Բայազէտում՝ 3 հատ, Քարվանսարայում՝ մէկ, Երևանում՝ մէկ. բոլորը միասին՝ 28 հատ:

Հետևեալ որբանոցները ջոկ ընկերութիւնների հսկողութեան տակ են, բայց նպաստներ ստանում են Կենտրոնական Կոմիտէի միջոցով և որոշ չափով ենթարկւում են նրան. Թիֆլիսում՝ Կանանց կոմիտէի երկու որբանոց, Օրիորդաց կոմիտէի մէկ որբանոց:

Գանձակի Գաղթականական կոմիտէի մէկ որբանոց. Ղարաքիլիսայում՝ Պետրոգրադի հայկական կոմիտէի որբանոց: Ալէքսանդրապոլում՝ Միացեալ ընկերութիւնների 2 որբանոց: Բոլորը միասին 7 հատ:

Թիֆլիսում ծխական համայնքի մի որբ.:

Նղրայրական օգնութիւնը էջմիածնում ունի 2 որբանոց,

Երևանում՝ 6 հատ, Իզդիբրում՝ մէկ, Նոր-Բայազէտում՝ մէկ, Ներքին Ախտայում՝ մէկ. միասին 11 հատ:

Սպաստամատոյցն ունի մէկ որբանոց Թիֆլիսում: Մուկուայի Հայկական Կոմիտէն 5 որբանոց ունի Աշտարակում: Աստրախանի հայ հասարակութիւնը մի որբանոց է պահում Թիֆլիսում:

Տիկին Թայիրեանը Ղարաքիլիսայում իր ծախքով պահում է մէկ որբանոց:

Յիշուած բոլոր որբանոցները միասին 55 հատ են: Այս որբանոցներից 11 հատը գտնուում է Դիլիջանում, իննը՝ Թիֆլիսում, եօթը՝ Ալէքսանդրապօլում, եօթը՝ Երևանում, հինգը՝ Աշտարակում, չորսը՝ Նոր-Բայազէտում, երկուսը՝ Էջմիածնում, երկուսը՝ Փանծակում, երկուսը՝ Ղարաքիլիսայում. մէկ-մէկ հատ՝ Ախալքալաքում, Ախալցխայում, Ղարսում, Քարվանսարայում, Իզդիբրում և Ներքին-Ախտայում:

Հնարաւորութիւն չեմ ունեցել տեսնելու Բաթումի (մէկ), Սանահնի (մէկ) Կարեխի (մէկ) և Բազուի (5 հատ) որբանոցները, նաև նոր գրաւած երկրներինը *):

Աշխատանքները կատարել եմ հետեւեալ կերպ. Կենտրոնականի և Բարեգործական Ընկերութեան հսկողութեան տակ եղող որբանոցների գործերը քննել եմ մանրամասն, որբանոցների պաշտօնեաներից և խնամակալներից կազմակերպել եմ խորհրդակցութիւններ և պահանջներ եմ արել իբրև պաշտօնեայ, իսկ յիշուած ընկերութիւնների հսկողութեան տակ չեղող որբանոցներին ծանօթացնլ եմ մի դադափար կազմելու այդ որբանոցների ներկայի մասին: Սրանց մասին ևս հաւաքել եմ տեղեկութիւններ համաձայն նախօրօք կազմածս վիճակագրական տախտակների, և եթէ այդ որբանոցների վարչութիւններին յայտնել եմ զիտողութիւններս և տուել խորհուրդներ, զրանք կրել են մասնաւոր բնոյթ:

Նըջագայութեանս ընթացքում ամեն մի որբանոցի մասին հաւաքել և գրի եմ անցկացրել հետեւեալ տեղեկութիւնները. 1) Երբ է հիմնւել որբանոցը, ինչ վարչութեան հսկողութեան տակ է, ովքեր են անդամները, վարչութեան մէջ տա-

*) Զեկուցումս ուշ տպուելու պատճառով, հնարաւորութիւն ունեցայ վերջին երկու ամսուայ ընթացքում այցելելու Բաթումի, Կարեխի և Բազուի որբանոցները:

բուայ ընթացքում ինչ փոփոխութիւններ են եղել, որբանոցի կեանքում ինչ աչքի ընկնող դէպքեր են եղել. ովքեր են մօտ կանգնած այդ որբանոցի գործին ինչ դժուարութիւնների մէջ է եղել որբանոցը: 2) Շէնքը քանի սենեակ ունի, յարմար են, թէ ոչ, պատերը. յատակները ներկած են. ինչ արժի տարեկան վարձը. բակ ունի և ինչպիսի բակ է. պարտէզ ունի. կան բոսաւ սենեակներ: 3) Մնունդ. օրական քանի անգամ են կերակրում. առուօտեան, նախաճաշին, ճաշին և ընթրիքին ինչ են տալիս ուտելու. ուտելիքի տեսակները: Բաւարար է ուտելիքը ընդհանրապէս: 4) Մարքուծիւն. Մաքուր են պահուած սենեակները, անկողինները, երեխաների սպիտակեղէնը, երեխաների գլուխներն ու մարմինները. եթէ անմաքուր են, ո՞ր կողմն առանձնապէս: Անկողինները, երեխաների սպիտակեղէնը, մարմինները անձամբ, մէկ-մէկ նայել եմ և յետոյ եզրակացութիւն հանել: 5) Հագուստեղէն. Ամեն մի երեխայ քանի սաւան, քարձի երես, երեսաբբիչ, թաշկիւնակ, վերնաշապիկ, շապիկ, վարտիք, զխարկ, վերարկու, գուլպայ, կոշիկ ունի: 6) Հիւանդութիւններ և բժշկութիւն. Ինչ հիւանդութիւններ են եղել, քանի հոգի են մի որոշ հիւանդութիւն ունեցել. այժմ ինչ հիւանդութիւններ կան, ո՞վ է բժիշկը, քանի անգամ է այցելում, ինչ դժուարութիւնների է հանդիպում բժշկական գործը, կան որբանոց-հիւանդանոց, ինչ վիճակի մէջ է: 7) Դրպրոցական գործ. քանի բաժանմունք ունի. կան զուգընթաց, միացեալ բաժանմունք. Ա. Բ. Գ. Դ. և միւս բաժանմունքներում քանի աշակերտ կայ. քանի տղայ և աղջիկ են սովորում. միասին քանի հոգի են. կան մանկապարտէզ. քանի երեխայ կայ և ինչպէս է դրած գործը: Ուսուցիչների անունները, ցենզը. տաճկահայ, թէ ռուսահայ, ոտձիկը քանի, դասերի քանակը, ինչ դասեր են. ինչ են անցել. հնարաւորութեան դէպքում արտագրել եմ ինքս, կամ արտագրել եմ տուել անցածի ծրագիրը. ինչպէս է տարուել գալրոցական գործը ընդհանրապէս: 8) Ծառայողներ. կառավարչուհին ո՞վ է, ինչ կրթութիւն ունի և ինչ ոտձիկ է ստանում. նոյն տեղեկութիւններն օգնականի մասին. ուրիշ ինչ ծառայողներ կան (խոհարար, մայրապետ, լուսցարարուհի, ծառայ և այլն), ինչ ոտձիկ են ստանում. ռուսահայ, թէ տաճկահայ են: 9) Հաշիւներ. ինչպէս են պահուած հաշիւները, կան փաստաթղթեր. կան առարկելի կէտեր. ո՞վ է գնողը. մինչև այժմ ամեն ամիս ինչքան է ծախ

սուել: 10) Երեխաներ. Անուանացուցակ երեխաների, ազգանունը, հօրանունը, գրագէտ է. սրտեղացի է, ծնող ունի՞, քանի տարեկան է: Ամեն մի որբանոցում մէկից մինչև 3 տարեկան երեխայ (տղայ և աղջիկ ջոկ) քանի հոգի կայ. 4—6 տար. 7—10 տար., և 11 և աւելի տարեկան քանի տղայ և աղջիկ երեխայ կայ: Այս տեղեկութիւններին կցել եմ ամեն մի որբանոցի մի որոշ հարցի մասին գնահատականս, եթէ այդ անբաժեշտ եմ համարել:

Սրանից զատ, Կոմիտէիդ ներկայացնում եմ ամեն մի տեղի որբանոցների մասին կատարածս ընդհանուր զրական և բացասական գնահատութիւնները, նոյնպէս զբաւոր, այսպէս օրինակ, Թիֆլիսի որբանոցները ինչ զրական կողմեր ունին ընդհանրապէս, ինչ բացասական-պակասաւոր կողմեր ունին. թւում եմ մէկ-մէկ և պատճառաբանում: Այդ ընդհանուր դիտողութիւններին կցել եմ այն խորհրդակցութիւնների բովանդակութիւնը, որ ես ունեցել եմ տեղական վարչութիւնների, պաշտօնեաների և կառավարչուհիների հետ: Այս մտքով զեկուցումներ ունիմ Թիֆլիսի, Գիլիջանի, Նոր-Բայազէտի, Ալէքսանդրապոլի և Գանձակի որբանոցների մասին: Այն տեղերի որբանոցների մասին, որոնք մի-մի հատ որբանոց ունին, կամ Կենտրոնական կոմիտէի վերահսկողութեան տակ չեն, նոյնպէս գնահատական կարծիքներ եմ յայտնել, սակայն համառօտ:

Այս աշխատանքներից զատ, բայց հիմնուած սրանց վերայ, կազմել եմ մի ընդհանուր զեկուցում մեր բոլոր որբանոցների զրական և բացասական կողմերի մասին, որը և կարգում եմ Կոմիտէիդ այս նիստին: Այս զեկուցմանը կցուած են վիճակագրական ընդհանուր տախտակներ:

Իմ այս դիտողութիւններն ու նիւթերը ներկայացնում եմ Կենտրոնական Կոմիտէիդ, որպէս զի քննութիւնից յետոյ հարկաւոր հրահանգները արուէր որբանոցների վարչութիւններին:

Գործը շատ է մեծ և կարևոր, իսկ հարցերի շտապողական լուծումը դարձել է անհրաժեշտութիւն:

ԳՈՒՐԳԷՆ ԷԳԻԼԵԱՆ

1916 թուի սեպտ. 3-ին

Թիֆլիս.

ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ

1. Այս մօտ մի տարուայ փորձը *) զգալի արդիւնքներ է տուել որբանոցների գործը կանոնաւոր կազմակերպելու համար: Սրանք այժմ որոշ տեսակ կազմակերպուած հաստատութիւններ են. ունին խնամակալութիւններ, ղեկավարող վարչութիւններ, ստորին որոշ տեսակի աշխատաւորների կազմ, սննդի, հագուստի մաքրութեան մասին որոշ պահանջներ: Այս բոլորը յառաջացել է ժամանակի ընթացքում, աստիճանաբար, բազմատեսակ փորձերից յետոյ: Կեանքի փորձն որբանոցներին անկերպարան վիճակից բարձրացրել է զէպի կերպարանաւորութեւր. մինչև այժմեան աշխատանքը կերտել է որբանոցի կրմախքը, բայց նրան ղեռ չի բարեզարդել:

Եթէ այս մի տարուայ կազմակերպչական աշխատանքը չլինէր, հազիւ թէ հնարաւոր լինէր նոյն իսկ մտածելու այն բարեփոխութիւնների համար, որոնց մասին յիշատակելու եմ զեկուցմանս մէջ:

Մեր հասարակութիւնը անպատրաստ է էր այս տեսակ աշխատանքի համար, նա իրական կեանքի փորձ չունէր. մօտենալով որբանոցների խնդրին և իրեն դնելով այս ծանր հարցի տակ, թւում է ինձ, նա պատուաւոր զուրս եկաւ այս մեծ պատասխանատուութեան տակից:

*) Դիլիջանի առաջին որբանոցը բացուել է 1915 թ. օգոստոսի 28-ին, Քարվանսարայինը՝ 1916 թ. փետր. 4-ին. Նոր-Բայազետինը՝ 1915 թ. նոյեմբերի 20-ին. Ախտայինը, 1916 թ. փետր. 20-ին, Սրեւանինը, 1915 թ. օգոստոսի 3-ին. Էջմիածնինը՝ 1915 թ. հոկտեմբեր ամսին. Իզդիբիները, 1915 թ. սեպտ. 20-ին, Ալեքսանդրապոլինը, 1915 թ. նոյեմբերի 20-ին, Ղարսինը, 1915 թ. նոյեմբերի 21-ին, Ղարաքիլիսայինը, 1915 թ. հոկտ. 5-ին: Թիֆլիսինը, 1915 թ. սեպտեմբերին, Գանճակինը, 1915 թ. սեպտ. 9-ին, Ախալցխայինը, 1916 թ. յունիսի 6-ին, Աեալքայակինը, 1916 թ. յունիսի 27-ին:

Վստահ կարող եմ ասել—գործը յառաջադիմել է. յառաջադիմել են կառավարչուհիները ընդհանրապէս, յառաջադիմութիւն է նկատուում որբանոցների շէնքերի ընտրութեան, աննդի, մաքրութեան և նոյն իսկ կրթութեան մէջ. վարժուել են տեղական մարմիններն ու խնամակալները գործը յաջող առաջ տանելու հանգամանքները հասկանալու և ընտրութիւն կատարելու խնդրում: Այս տեսակէտից շնորհակալութեան արժանի են մեր որբանոցների գործիչների ոտուար մեծամասնութիւնը:

Ամեն մի որբանոց բնակիս, առանձնապէս հետաքրքրել է ինձ այն հարցը, թէ որբանոցը երբ, ինչ պայմաններում է յառաջացել, ինչ խոչնդոտների միջով է անցել և ինչ զարգացում է կատարել իր գոյութեան ընթացքում: Եզրակացութիւնս հետեւեալն է. քիչ որբանոցներ չեն յառաջադիմել, շատ քիչ որբանոցներ են թուլացել անցեալի համեմատութեամբ, իսկ ստուար մեծամասնութիւնը յառաջադիմութեան քայլեր է արել. այսպէս օր. յառաջադիմել են Թիֆլիսի, Դիլիջանի, Երեւանի, Ղարսի, Աշտարակի, Գանձակի, մասամբ Ալէքսանդրապօլի որբանոցները:

2. Որբանոցների շէնքերի մասին պէտք է դրական մըտքով արտայայտուեմ. ընդհանուր առմամբ յարմարաւոր շէնքեր են. յատակները տախտակից են, շատ դէպքերում ներկած, քիչ դէպքերում սենեակների յատակները տախտակից չեն լինում: Անձեփ պատեր համարեա չեն պատահում: Որբանոցների շէնքերի պատուհանները մեծ են, լոյսի հոսանքը բաւարար է. 414 սենեակից գուցէ հազիւ 14 սենեակը լոյսի միանգամայն անբաւարար քանակ ունենայ: Խոնար սենեակներ պատահում են, բայց թուով նոյնպէս քիչ են:

Որբանոցի բնակարաններն այնպէս են, որ մեր միջին բուրժուական շրջանի շատ և շատ ընտանիքներ սիրով կապրեն այդ բնակարաններում, մի քանի տեղերի շէնքերը առաջնակարգների թուին են պատկանում. օր. Ղարաբիլիսայինը, Քարվանսարայինը, Ախալքալակինը, Դիլիջանինը, Աշտարակինը, Էջմիածնինը, Ախտայինը, Երևանինը: Թիֆլիսի որբանոցների շէնքերը թէև այդ քաղաքի շէնքերի մէջ առաջնակարգ տեղ չունին, բայց նոյն կուարտալի լաւ շէնքերի թուին են պատկանում: Անբաւարար շէնքերի կամ սենեակների թիւն այնքան քիչ է, որ ամենայն հանգստութեամբ կարելի է ասել, որ

մեր որբանոցներն այդ տեսակէտից շատ լաւ վիճակի մէջ են: Եղած մանր պակասութիւնները հեշտ ուղղելի են: Իսկ աչքի ընկնող բացասական կողմն այն է, որ 55 շէնքից 15 հատը խոքր, կամ շատ փոքր բակեր ունին, թէև այդ պակասն որբանոցի վարչութիւնները լրացնում են յարմար մի վայր ընտրելով երեխաների ազատ խաղերի համար:

3. Այդ շէնքերը պահուում են ընդհանրապէս մաքուր. մաքրութեամբ կարող են պարծենալ մեր որբանոցները: Մաքուր են պահուում յատակները, պատերը, պատուհանները, խոհանոցները, ամանեղէնները; անկողինները. երեխաների շոքերն ու մարմինները: Առանձին ուշադրութեամբ դիտել եմ այդ բոլորը, ինքս եմ քննել անկողինների, երեխաների շոքերի, մարմինների և գլուխների մաքրութիւնը: Որբանոցների մեծամասնութեան մէջ երեխաները լողանում են շաբաթը մի անգամ. երկու շաբաթը մի անգամ լողացնելու սովորութիւնն ևս տարածուած է. իսկ երեք շաբաթը, կամ ամիսը մի անգամ լողացնելու դէպքեր շատ քիչ են պատահում:

Մաքրութեամբ աչքի են ընկնում երեանի, Աշտարակի, Թիֆլիսի (ոչ բոլորը) Գանձակի, Ղարսի, Քարվանսարայի, տիկ. Թայիրեանի (Ղարաքիլիսա) և Ալէքսանդրապոլի մի քանի որբանոցները: Մի փոքր անբաւարար վիճակում գտայ մաքրութիւնը Նպաստամատոյցի Թիֆլիսի որբանոցում. Դիլիջանի երկու որբանոցում (երեխաների շոքերը, յատակները), Ալէքսանդրապոլի երկու՝ Կոմիտէի № 2 և Բարեգ. Ընկ. № 1 (երեխաների գլուխները և մարմինները) որբանոցներում, Նոր-Բայազէտի երկու որբանոցում և Իգդիրի որբանոցում: Մէկ տեղ երեխաների շոքերի վրայ միջատներ էին լինում, մի այլ տեղ անկողինները մաքուր չէին լինում, ուրիշ տեղ յատակները կամ բակը բաւարար մաքուր վիճակի մէջ չէի գտնում, այլ մանր. բաների մէջ ևս նկատում էի որոշ անմաքրութիւն: Սրան անմիջապէս սակայն պէտք է կցեմ, որ այս բոլորն աւելի բացառիկ բնոյթ ունէին, նախ նկատուած կեղտոտութիւնները մեծ չէին և զայրոյթ յառաջացնող, շատ տեղերի համար զուցէ դրանք պատահականութեան բնոյթ ունէին: Այս բոլորը սակայն չի խանգարում ամենայն վստահութեամբ յայտարարելու, որ մեր որբանոցներում մաքրութիւնը գտնուում է գոհացուցիչ վիճակի մէջ: Զգիտեմ, թէ այս երևոյթը պէտք է բացատրել մեր ցեղի առանձնայատկութեամբ, թէ հասարակութեան ան-

դամները յաճախակի այցելութիւններովը: Թւում է ինձ, որ այս վերջին հանդամանքը և մրցութեան ընազդն իրենց բարերար ազդեցութիւնն են ունեցել այս խնդրում:

4. Թէև հագուստեղէնի քանակը մի քանի որբանոցներում անբաւարար վիճակի մէջ է գտնուում, բայց պէտք է ասեմ, որ ընդհանուր առմամբ բաւարար կարելի է համարել որբանոցներում գործածուող շորերի քանակը և որակը:

Վերամակները սովորաբար լինում են բրդից կամ բամբակից, երբեմն ադեալներ են լինում: Քիչ տեղեր ադեալներին կամ վերամակներին ամրացրած են լինում սաւաններ, վերամակների մեծ մասը սաւան չունի: Շատ տեղեր վերամակները երկու երես ունին, մէկի մէջ բուրդն է, միւսն ամրացրած է բուրդը պարունակողի վրայից: Այս դէպքում հեշտ է լինում մի երեսը քանդել, լուանալ և յետոյ էլի վրան կարել: Շատ տեղեր այս յարմարութիւնն էլ չըկայ, այնպէս որ լուանալիս, պէտք է ամբողջ վերամակը իր բրդով միասին լուացուի:

Բարձերը խոտից են լինում, քիչ դէպքերում բրդից: Բարձի երեսները սպիտակ կտորից են լինում և լուացում են բաւականին շուտ-շուտ: Որբանոցների անկողինները գտայ ընդհանուր առմամբ բաւարար վիճակի մէջ: Երեխաներն ունին գոնէ երկու ձեռք սպիտակեղէն, քիչ դէպքերում՝ մէկ կամ երեք ձեռք: Շորեղէնի քանակը լաւ կամ տանելի գտայ Թիֆլիսի, Երևանի, Աշտարակի, Ղարսի, Ալէքսանդրապոլի, Գանձակի, Քարվանսարայի, Ղարաքիլիսայի որբանոցներում, պակասաւոր՝ Դիլիջանի, Նոր-Բայազետի, Էջմիածնի, Իզդիբի և միւս քաղաքների մի քանի որբանոցներում:

Բայց և այնպէս պէտք է շորեղէնի խնդիրը էլի բաւարար չափերով գրական վիճակի մէջ համարեմ. ներկայ թանգութեան ժամանակ, եթէ այսբանն արուել է, նշանակում է, էլի մի զգալի բան է կատարուել: Երեխաները պատուած, հնամաշ, կեղտոտ, անդուր տպաւորութիւն յառաջացնող շորեր չունին, ընդհանուր առմամբ գոհացուցիչ տպաւորութիւն են թողնում դիտողի վրայ: Եթէ մի քանի այս տեսակէտից ետ մնացած որբանոցներ մի փոքր այս ուղղութեամբ աւելի յառաջադիմեն, այն դէպքում մեր որբանոցներն շորեղէնի խնդրում կը գանուին շատ լաւ վիճակի մէջ:

Սպիտակեղէնը պահուում է ցանկալի մարքուրեան մէջ. ամեն տեղ բանալ էի տալիս երեխաների շապիկները և նայում

էի շապիկներին և նրանց մարմինն: Քիչ զէպքերում եմ երեխաների շապիկների վրայ կեղտ կամ միջատներ նկատել. հազիւ 5 որբանոց այս տեսակէտից անթոյլատրելի վիճակի մէջ գտայ: Եւ այս շատ բնական էլ է, որովհետեւ սպիտակեղէնը բոլոր որբանոցներում փոխում են շարաթը մի անգամ, փոքրերինը նոյն իսկ մի քանի անգամ: Նոյն կերպ է փոխում նաև անկողնի սպիտակեղէնը. սաւանները, մանաւանդ վերմակինը, փոխում են մի քանի տեղեր երկու շարաթը մի անգամ. իսկ սաւան չունեցող վերմակների երեսները շատ տեղ փոխում են ամիսը կամ երկու ամիսը մի անգամ: Քիչ որբանոցների վերմակներ և ներքնակներ գտայ անթոյլատրելի կեղտոտ վիճակի մէջ: Սպիտակեղէնի մաքրութիւնից մնացի ընդհանրապէս զօն:

Մի բան սակայն զգալի էր. որբանոցների երեխաների մեծամասնութիւնն այս ամառ բոկոտն էր ման գալիս, կօշիկներ և գուլպաներ շատ քիչ քանակով կան: Եթէ իրար վրայ բաժանենք, ամեն մի երեխայի մի զոյգ գուլպայ և կօշիկ չի ընկնիլ: Ամառը թոյլատրելի է բոբիկ ման գալը՝ անտանելի կը լինի աշնանը և ձմեռը:

5. Սնունդ. Սնունդը նոյնպէս համարում եմ բաւարար, իսկ շատ տեղեր՝ նոյն իսկ լաւ: Լիակատար անբաւարար սընունդ շատ քիչ զէպքերում է տրուել կամ տրուում է: Օրական տրուում է չորս կամ երեք անգամ. երեք անգամ է տրուում այն որբանոցներում, որտեղ նախաճաշ չի տրուում: Ծաղց տրուում է շարաթական 2—3 անգամ, մի քանի տեղեր նոյն իսկ 4—6 անգամ մտեղէն կերակուր, իրկու անգամ պասուց և երկու անգամ էլ իւղով կերակուր: Սննդի մասին կառավարչուհիներից, վարչութիւններից քիչ եմ զժողովութիւն լսել, թէև պէտք է ասեմ, որ մի քանի տեղեր երեխաները սննդի վատութեան և անսովորութեան պատճառով զժողովութիւններ են յայտնել կառավարչուհիներին կամ վարչութիւններին: Տարին ի նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ զժուար թէ մեր գիւղացիութեան ունեոր գասի երեխաներն աւելի լաւ սնուեն, քան որբանոցների երեխաները: Սննդի կանոնաւորութեան ամենամեծ ապացոյցն երեխաների առողջութիւնն է:

6. Երեխաների առողջութիւնը. Շրջագայութիւններից ստացած ամենաուրախալի տպաւորութիւնն է եղել երեխաների առողջութիւնը: Գաղթի ժամանակ երեխաների բացարձակ մեծամասնութիւնը ունեցել է զիղինտերիա և այլ բազմաթիւ հի-

ւանդութիւններ. երեխաները եղել են նիհար, դալուկ, ոսկրացած, էներգիայից զուրկ և մռայլ տրամադրութեամբ, շատերը եղել են կիսամեռ վիճակի մէջ: Կեանքի նորմալ պայմանները, խնամքը, յաջող սնունդը ետ են բերել երեխաների առողջութիւնը, նրանք դարձել են կայտառ, ուրախ, ջիւր և նոյն. իսկ կարմրաթուշի Հիւանդոտ և դալուկ երեխաները կազմում են ամբողջութեան ամենաչնչին տոկոսը: Մեր գիւղացիութեան երեխաներն եթէ այսպիսի առողջութիւն ունենային, դա կը լինէր ազգային մի մեծ բախտաւորութիւն:

7. Բարոյական ազդեցութիւն. Որբանոցներն ունեցել են բարոյական ազդեցութիւն, ահա մի հարց, որին պատասխանելը դժուար է բաւականին, նախ որովհետեւ ժամանակաշրջանը շատ փոքր է, երկրորդ, քննութիւնն այս ուղղութեամբ աւելի լայն և մեծ չափերով պէտք է կատարել, և վերջապէս այսպիսի հարցերը դժուար լուծելիների կարգին են պատկանում: Մեր որբանոցների բարոյական ազդեցութեան, կրթութեան և դաստիարակութեան պակասութիւնների մասին կը խօսեմ յետոյ, որից կերևայ, որ ես շատ էլ գոհ չեմ, բայց չեմ քաշոււմ յայտարարելու, որ այս ուղղութեամբ էլ աշխատանք է թափուել: Երեխաների ընդունակութիւնից և սրամտութիւնից գոհ են համարեա բոլոր կառավարչուհիները և որբանոցին մօտ եղող անձինք. ուսման ձգտումն ու սէրը նոյնպէս զգալի է: Կառավարչուհիներից ոմանց յաջողուել է խորն ազդեցութիւն թողնել երեխաների վրայ և բարոյապէս նրանց դաստիարակել, թէև չեմ կարող ասել, որ դրանց թիւը շատ մեծ է:

8. Մի դրական հանգամանք եմ համարում նաև այն, որ երեխաներին արհեստ կամ հողագործութիւն սովորեցնելու ցանկութիւնը համարեա ընդհանուր է բոլոր որբանոցների վարչութիւնների համար, բոլորն էլ նոյնն են պնդում, թէև մեծամասնութեան ցանկութիւնն աւելի պլատօնական բնոյթ ունի. քիչ տեղեր են այդ միտքը իրականացրել (Գիլիջանում, Երեսնի և Ալէքսանդրապոլի մի-մի որբանոցներում. տիկ.Քայիրեանի որբանոցում, իսկ Ախալցխայում 5 երեխայի ուղարկում են քաղաքի արհեստանոցներից մի քանիսը): Բայց վարչութիւնների արհեստ սովորեցնելու ցանկութիւն ունենալը համարում եմ մի շատ դրական երևոյթ, որովհետև այդ դէպքում աւելի հեշտ կը լինի այս ուղղութեամբ բարեփոխութիւններ մտցնել որբանոցների մէջ, բացի այդ, դա մի շատ ուրախալի փաստ

է, որ մեր որբանոցները վարչական գործիչները շատ հեշտ են ըմբռնել երեխաների ապագայի հարցը: Նրանց պէտք է կենտրոնից օգնել, որ շուտով իրականացնեն այդ միտքը:

9. Որբանոցների մասին հասարակութեան որոշ մասի մէջ տարածուած է այն կարծիքը, թէ հաշիւներ չունին, թէ նոյն իսկ մեծամեծ կեղծիքներ են կատարուել և այլն: Հաշիւների մասին կարող եմ ասել, որ երանի թէ մեր ամեն գործի մէջ գտնէ ձեռական տեսակէտից այնպիսի բաւարար հաշիւներ և հաշուէմատեաններ լինէին, ինչպիսին ունին մեր որբանոցները: Մի քանի որբանոցներ այդ տեսակէտից անբաւարար վիճակի մէջ են գտնուում այդ մասին խօսելու եմ իր անզրէմամարեա բոլոր որբանոցները փաստաթղթերով օրերի և ամիսների բաժանած հաշուէմատեաններ ունին: Այդ փաստաթղթերի թուերն ու գները, գնածի քանակը որքան համապատասխան է իրականութեան, ինձ առանձնապէս չի զբաղեցրել, որովհետեւ ես չէի կարող այսքան կարճ ժամանակում այդ ուղղութեամբ քննութիւն կատարել:

10. Զանազան որբանոցներում եղիլ են և կան այս կամ այն չրական կողմերը, սակայն որովհետեւ այդ հանգամանքներն աւելի մասնակի բնոյթ ունին, այդ պատճառով էլ չեմ յիշատարում այստեղ. զրանց մտաին յիշատակուած է որբանոցների մասին ջոկ-ջոկ գրած զեկուցազրերիս մէջ: Մի ընդհանուր բան էլ պէտք է յիշեմ այստեղ. իմ տպաւորութիւնն այն է, որ կովկասահայ հասարակութիւնը և թրքահայ ինտելիգենցիան որբանոցների հարցին աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան թաղթականական հարցի հետ կապուած այլ մասնակի բազմաթիւ հարցերի, սրտացաւութիւնն այստեղ աւելի մեծ չափերով է նկատուում: Այս հանգամանքը մեծ գրաւական է որբանոցների մէջ բարեփոխութիւններ մտցնելու ձեռնարկութիւնների համար:

ՊԱԿԱՍԱԽՈՐ ԿՈՂՄԵՐ

Կրթական-առողջապահական խնդիր

Մինչև այժմ խօսեցի որբանոցների դրական կողմերի մասին: Քիչ չեն սակայն նաև որբանոցների պակասաւոր կողմերը, որոնց վրայ առանձին ուշադրութիւն եմ դարձնելու, որովհետև պակասութիւնները տեսնելուց յետոյ միայն կարելի է բարեփոխութեան մասին մտածել: Նպատակայարմար եմ համարում պակասութեանը վերաբերող գիտողութիւններին կցել բարեփոխութեան առաջարկներ: Այս կերպ մեզ հետաքրքրող խնդիրներն աւելի լաւ կը լուսաբանուեն:

1. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ

Մեր որբանոցների ամենաաչքի ընկնող պակասութիւնն է որբանոցի ոգու ուղղութեան, ապագայի մասին ունեցած հասկացողութիւնների խառնաշփոթութիւնը: Այս խնդրում որբանոցների մէջ չի իշխում սրտը նմանութիւն, ծրագրի նոյնութիւն: Մէկ տեղ որբանոցների վարչութիւնների աչքի ընկնող անդամները կամ որբանոցի անմիջական վարիչները կարծում են, որ որբերը դառնալու են քաղաքի արհեստաւորներ, մի այլ տեղ՝ միջնակարգ կրթութիւն ստացած անհատներ մի ուրիշ տեղ՝ գիւղացիներ, որոնք զբաղուելու են գիւղատնտեսութեամբ կամ արհեստներով: Շատ տեղեր նոյն իսկ այդ տեսակ հարցերով չեն զբաղում, այլ աշխատում են միանգամայն անծրագիր:

Մի տեղ մտածում են, որ երեխաները դառնալու են գիւղացիներ, բայց այնպէս են պահում, կարծես ինտելիգենտ քաղաքացիներ պատրաստելիս լինեն, մի ուրիշ տեղ արհեստա-

ւորներ են ուզում պատրաստել, բայց որբանոցի ներքին նիստ ու կացը, ոգին բոլորովին մի այլ յատկանիշ ունի: Տեսական ըմբռնումը և գործնական աշխատանքը շատ յաճախ աղաղակող հակասութեան մէջ են գտնուում:

Գործի այս խառնաշփոթութեանը նպաստում է կենտրոնական մարմինների որոշ ծրագրով որբանոցների վրայ ազդելու որոշման բացակայութիւնը: Եթէ կենտրոնական կազմակերպութիւնները (կենտրոնական կոմիտէ, եղբ. օգն., նպաստամատոյց և այլն) այս խնդրով լրջօրէն զբաղուէին և այդ զբաղուելուց յետոյ իրենց որոշումները հետևողականօրէն իրականացնէին կեանքի մէջ, հաւանօրէն արծարծածս խնդրում որբանոցներն այս անմխիթար վիճակի մէջ չէին գտնուիլ:

Միանգամայն ռիսկ կը լինէր պատճառը միմիայն կենտրոնական կազմակերպութիւնների մէջ որոնելը, պատասխանատուների մի մասը որբանոցներին աւելի մօտ են կանգնած, զրանք որբանոցների տեղական խնամակալները, կառավարչուհիներն ու իրենց օգնականներ ճն, որոնցից շատ շատերը քիչ են կրթուած ու զարգացած, զուրկ են լայն աշխարհանայեացքից, չեն ըմբռնում մեր ազգային-հասարակական կեանքի այրող հարցերի արժէքն ու կարևորութիւնը: Իսկ այդպիսի պահանջների չբաւարարող անհատները չեն կարող կենդանի և բարձր ծրագրով աշխատանք կատարել:

Այս կերպ գործ շարունակելը ցանկալի չէ, պէտք է պարզ պատկերացնենք երեխաների ազգայան, այդ մասին վերջնական եզրակացութեան գտնք և աշխատենք մեր գործնական ձեռնարկները յարմարեցնել կանխորոշած նպատակի ոգուն:

Սրա հետ է կապուում նաև այն խնդրի քննութիւնը, թէ որբանոցների ներկայ սիստեմն որքան նպատակայարմար է, արդեօք ապագայում որբերին ընտանիքներում տեղաւորելու, թէ իրար հետ խմբաւորած պահելու ներկայ ձևը նպատակայարմար է: Եւ եթէ սրանցից մէկն ու մէկը նախընտրելի է, ինչպէս պէտք է նախապէս և բարոյապէս կազմակերպել գործը:

Ապագայ անհաճոյ անակնկալների համար նախապատրաստուած պէտք է լինենք այժմեանից:

Կան պնդողներ էլ, թէ առանձին հեռանկար, որոշ ծրագիր ունենալու կարիք չըկայ, որովհետև երեխաները շուտով վերադառնալու են հայրենիք: Որ երեխաները վերադառնալու են, դա անկասկած է, բայց որ յայտնի չէ այդ ժամանակը,

դա ևս անկասկած է, իսկ որ հազիւ ամենաշուտը երկու տարուց յետոյ վերադառնան, դա էլ արդէն շատ հաւանական է: Հազիւ թէ երեսնաների հայրենիքն այդքան շուտ և այն չափերով տանելի ձևով վերաշինուի, որ կարելի լինի որբանոցներն իսկոյն տեղափոխել այնտեղ:

Այս հանգամանքը պէտք է հարկադրէ մեզ աւելի ուշադրութիւն դարձնելու որբանոցների ոգու, ուղղութեան և երեսնաների ապագային վերաբերող հարցերի վրայ: Մեզ մօտ պէտք է հիմքը լաւ դնել, որպէս զի իրենց հայրենիքում երեսնաների կրթութեան գործն աւելի հեշտութեամբ առաջ տարուի:

Որբանոցների նպատակը կը ձևակերպէի այսպէս. որբանոցը ընտանիքի ձևով կազմուած մի հաստատութիւն է, որտեղից դուրս են գալու ապագայի համար կրթուած և կենսունակ քաղաքացիներ: Տղաները դառնալու են մտաւորապէս, Ֆիզիքապէս և բարոյապէս կրթուած և մարզուած զբաղէտ արհեստաւորներ և երկրագործներ, իսկ աղջիկները նոյն ոգով կըրթուած արհեստաւորներ և տնտեսուհիներ՝ իրենց ապագայ կողմանը համապատասխան:

Առանձնայատուկ ընդունակութիւնների տէր երեսնաները կարող են այլ կոչումի համար նախապատրաստուել:

Այս նպատակին հասնելու համար որբանոցը պէտք է ունենայ՝ ա) արհեստանոց, բ) դիւղատնտեսութիւն սովորելու համար ազարակ, գ) դպրոց և դ) կրթական զանազան ձևաւորակներ:

2. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Այս մասին խօսք եղաւ որբանոցների զբաղման կողմերի մասին խօսելիս: Այնտեղ որոշ դժգոհութիւն յայտնեցի մեր որբանոցների դաստիարակչական ազդեցութեան թուլութեան մասին: Բնական է, որ պատկերն այլ կերպ լինել չի կարող, որովհետեւ ինամակալուհիների և մանաւանդ կառավարչուհիների մեծամասնութիւնն իր կոչման բարձրութեան վրայ չի գտնուում: Տեղեր կան, ուր կառավարչուհիներն անզբաղէտ, անկիրթ կանանց տպաւորութիւն են թողնում հէնց առաջին անգամ տեսնելիս: Ծանօթանում ես նրանց անձնաւորութեան և գործի հետ և համոզում, որ չես սխալուել առաջին տպաւորութեանդ մէջ:

Կառավարչուհիների և խնամակալների վերաբերմունքը տարրեր է ղէպի տարրեր երեխաներ. անտանելի ջղային վերաբերմունք և անթոյլատրելի սիրոյ և քնքշութեան արտայայտութիւններ թոյլ են տրուում նոյն որբանոցում ղէպի տարրեր երեխաներ: Կան կառավարչուհիներ, որոնք սանատորիաներում իրենց ջղերը հանգստացնելու պէտք ունին և ոչ որբանոց կառավարելու հնարաւորութիւն: Եւ բնական է, որ այդպիսի պայմաններում որբանոցների կրթական գործը չի կարող լաւ հիմքերի վրայ դրուել:

Որբանոցներում բաւաւար չափերով չեն կազմակերպուում զբօսանքներ. մանկական հանդէսներ ու ներկայացումներ, բնութեան դրկում նախաճաշեր, էքսկուրսիաներ, կրթաթկան խաղեր, ֆիզիքական վարժութիւններ և պարտիզի աշխատանքներ:


Մի քանի որբանոցում էլ կրթական միջոցները ծայրայեղ կերպով են գործադրութեան դրուում. երեխաներն օրուայ մեծ մասն անց են կացնում երգերով, պարերով, խաղերով մի փոքր լուրջ, կենտրոնացում պահանջող աշխատանք չըկայ ու չըկայ. իսկ սա արդէն վտանգաւոր ուղի է:

Կենտրոնում այժմ խորհրդակցութեան լուրջ առարկայ պէտք է դարձնել որբանոցների կրթական-դաստիարակչական հարցը. պէտք է որոշ ձևեր մշակուեն, միջոցներ ընտրուեն և առաջարկուեն որբանոցի գործիչներին: Յաճախ գաւառում չէ պահասում բարի ցանկութիւնը, այլ այնտեղ իշխում է երբեմն անկարողութիւնն ու անպիտութիւնը: Յաճախ էին խնդրում ինձ խորհուրդներ տալ այդ ուղղութեամբ և հրահանգներ ուղարկել Թիֆլիսից:

Որբանոցների կեանքին ընտանեկան բնոյթ տալու, երեխաների զգացմունքները, բարոյականը, իմացականն ու ֆիլիքականը կրթելու համար, պէտք է դիմել գործնական հետեւալ միջոցներին:

Ա. Կազմակերպել է պէտք զբօսանքների հետեւ կամ մօտ տեղեր երեխաների ուսման պակասը լրացնելու, նոր տեղեկութիւններ տալու, ֆիզիքապէս և հոգեպէս հանգստացնելու, թարմացնելու և գեղարուեստական տպաւորութիւններ տալու համար:

Բ. Պէտք է երեխաներին սովորեցնել ֆիզիքականը, միտքն



ու բարոյականը կրթող ազգային-ժողովրդական և մանկավարժական խաղեր:

Գ. Երեխաները պէտք է սովորեն ազգային, ժողովրդական ընտրովի երգեր ու պարեր:

Դ. Երեխաներին պէտք է գրադեցնել մարմնամարզութեամբ եւ մարմնամարզական խաղերով ոչ միայն դպրոցական յատուկ ժամերին, այլ և օրուայ այլ, բժշկի կողմից թոյլատրած ժամերին:

Ե. Պէտք է կազմակերպել որբանոցում գրական-երաժշտական հանդեսներ եւ աշակերտական ներկայացումներ:

Զ. Բակի մի յարմար տեղում կամ մի այլ վայրում պէտք է ունենալ պարտեզ ծաղկանոցային եւ բանջարաբուծութեան պարզ պարապմունքների համար: Այս աշխատանքներին մասնակցելու են նաև աղջիկները: Սա պէտք է նկատել իբրև կրթական մի ձեռնարկութիւն. մասնագիտական գիւղատնտեսութիւնը պէտք է կազմակերպել այլ տեղ և այլ կերպ:

Է. Որբանոցում պէտք է պահել բնտանի կենդանիներ, որոնց կերակրելու և խնամելու են երեխաները: Պէտք է հիմնել գոմ և հաւանոց: Այս ձեռնարկութեան գլխաւոր նպատակն է կրթականը և որբանոցին գիւղական ընտանիքի կերպարանք տալը:

Ը. Պէտք է որբանոցի մէջ մտցնել ձեռարուեստային զանազան պարապմունքներ, ոչ իբրև արհեստ, այլ իբրև կրթական արժէք ունեցող ազատ ժամերի պարապմունքներ: Այդ պարապմունքներն են՝ թուղթ կտրտել, կարդոնի և տախտակի աշխատանքներ, փայտ տաշել, փայտից իրեր շինել, կաւի աշխատանքներ և այլն:

Թ. Գիշերօթիկ կեանքի բացասական կողմերը թուլացնելու, երեխաներին հասարակական կեանքի հետ կապելու, շրջման մէջ պահելու համար՝

ա) տանել երեխաներին եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասմաս հասարակական յարմար ներկայացումների եւ հանդեսների:

բ) տանել այն վրտատեղերն, ուր հասարակութիւն կայ:

գ) տանելու տանել ժողովրդական տօնակատարութիւններ (ուխտատեղի, ջրօրհնէք, զատիկ, ժողովրդական խաղեր, հարսանիք, կնուէք և այլն):

դ) մասնակից անել երեխաներին զաղթականական կամ ծխական դպրոցների աշակերտների խաղերին, հանդեսներին,

ներկայացումներին և զբօսանքներին: Այս երեխաների աջակցութեամբ կազմակերպել կրթական ընդթ ունեցող աշխատանքներ:

Ե) Երեխաներին հիւր ուղարկել տեղի բարերարոյ և պարզ կեանք վարող ընտանիքների մօտ:

Կրթական այս ձեռնարկները իրականացնելիս, և առ հասարակ որբանոցի ներքին կեանքի մէջ իշխելու է կրթական մեղմ վերաբերմունք, քաղցր և ընտանեկան յարաբերութեան եղանակ. ճշտապահութիւն և պարտականութիւնները կատարելու պատրաստականութիւն: Որբանոցի պաշտօնեաները պէտք է պահանջկոտ լինին երեխաներից, որպէս զի նրանք կատարեն իրենց պարտականութիւնները: Որբանոցը հաստատուն զիսցիպլինայով կրթական մի հաստատութիւն է:

Կարելի է առարկել, թէ դաստիարակութիւնը չի կարելի հրահանգել, որովհետեւ կրթող անհատն ինքը պէտք է դաստիարակուած լինի: Այդ ճիշտ է, բայց զեռ չի ապացուցուած, որ կրթական հրահանգները ընդունակ, բայց անզիտակ անհատների հոգու աչքերը չեն բացում: Գուցէ շատ բան սպասելի չէ այս առաջարկից, բայց, թոււմ է ինձ, որ զործը գոնէ փոքր չափով կը շահուի սրանով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐԲԱՆՈՅՆԵՐՈՒՄ

Գաստիարակութեան պակասութեան մասին խօսելիս ասացի, որ որբանոցներում երեխաներին հարկաւոր չափերով չեն աշխատեցնում. սա մեր որբանոցների ամենավերաւոր կողմերից մէկն է: Կարծես երեխաներին յունական մտքով արիւտողրատներ են պատրաստում: Պէտք է ասեմ, որ որբանոցներում ընդհանրապէս թեթեւ աշխատանքներ տրոււմ է երեխաներին. օրինակ՝ անկողին հաւաքել, գուլպայ գործել, երբեմն սենեաներ մաքրել և այլն: Սակայն սա զեռ բաւական չէ: Պէտք է ըմբռնումի մէջ հիմնական կերպարանափոխութիւն մտցնել:

Առ հասարակ կեղտոտ աշխատանք չըկայ. ամեն մի աշխատանք, որը վերաբերում է որբանոցին, երեխաները իրենք պէտք է կատարեն. եթէ այդ աշխատանքները նրանց ֆիզիքական ուժերից վեր չեն: Այսպէս օր. երեխաները ջուր են բե-

բելու, փայտ են կրելու և կոտրելու, ջուր են թափելու, յատակ են մաքրելու, անկողին են հաւաքելու, դուրս են բերելու և ներս են տանելու, բակը ջրելու և աւելելու են. մասնակցելու են լուացքին, խոհանոցի աշխատանքներին, կարկատան են անելու, դուլպայ են գործելու, խանութում գնած իրերը տուն են բերելու և այլն, և այլն. Տեսակէտն այս է լինելու. ինչ մի հասարակ ընտանիքի տղայ կամ ազջիկ երեխայ անուժ է իրենց տանը, այդ նոյնը, դուցէ աւելի մեծ չափերով, անելու է որբանոցի երեխան իր որբանոցում:

Այս կերպ միայն կարելի է լուրջ կերպով դաստիարակուած սերունդ տալ: Մենք աշխատաւորներ ենք պատրաստելու և ոչ անգործութիւն և վայելքներ սիրող անհատներ: Աշխատանքի միջոցով երեխան կը կապուի որբանոցի հետ և իր ուժերն աւելորդ բաների վրայ չի վատնիլ: Այս կերպ հնարաւոր կը լինի կրճատելու հասարակ ծառայողների թիւը, որից անտեսած փողը կը գործադրուի նոյն որբանոցներէ բաղմագան կարիքների համար:

Հարց կարող է առաջանալ, ինչո՞ւ այս մտքով չեն տարւում որբանոցները, ինչու աշխատանքը յարգանքի առարկայ չի որբանոցներում: Պատճառները մի քանիսն են. մի քանի տեղեր իսկի այդ ուղղութեամբ չեն էլ մտածել, որովհետեւ անծրայիբ են աշխատում. մի քանի տեղեր էլ սխալ են հասկացել երեխաների շահը ենթադրելով՝ թէ որքան կարելի է նըրանց թեթև, այսպէս կոչուած «մաքուր» աշխատանքներ պէտք է տալ, կամ բոլորովին ազատել ֆիզիքական աշխատանքներից, շատ տեղեր էլ, թէև եղել են բաղմակողմօնի աշխատանք տալու կողմնակիցներ, բայց չեն վստահացել իրականացնելու իրենց մտքերը, վախենալով հասարակական կշառմաբանքից:

Կենարոնից լինելիբ կարգադրութիւնը ուղղութիւն կը տար չիմացողներին և վատահոլութիւն՝ անվստահներին:

4 ԱՐՉԵՆՏԵՆԸ

Աշխատանքից խուսափելու լուազոյն աղաքոյցներից մէկը կարելի է համարել արհեստների բացակայութիւնը մեր որբանոցներում: Երեխաներն որբանոցներում լուրջ, լարուժ պահանջող աշխատանքներ չունին: Պատկերացնենք որբանոցի առօրեայ կեանքը, առաւօտեան շուտ վեր են կենում երեխանե-

րը. թէ՛յ են խմում, հաց ուտում և այնուհետև բախում թափառում են մինչև նախաճաշը, երբ էլի ուտում են: Եթէ օրը շոգ է, այս կամ այն ստուերաշատ տեղում, նոյն իսկ արևի տակ, անդորձ կամ շատ թեթև գործերով զբաղուած՝ սպասում են ճաշին: Ճաշում են. ճաշից յետոյ շոգ է լինում. եթէ նընջարանը մտնէք կրգանէք այստեղ կամ այնտեղ քնած երեխաներ: Երեկոյեան հովին խաղում, պարում կամ երգում են մինչև ընթրիքը: Ընթրիքից յետոյ էլի զուարճութիւններ և սպանկողին: Գպրոցական պարապմունքները մի առանձին լարում առաջ չեն բերում, որովհետև ընդհանրապէս լաւ հիմքերի վրայ չէ գրուած որբանոցների գպրոցական գործը:

Այսպիսով տեսնում ենք, որ որբանոցները ուտելու, երբեմն էլ զուարճանալու համար գոյութիւն ունեցող հաստատութիւններ են: Երեխաները լաւ են սնում, ուժերը կիտակուում են, արտայայտուել են ուզում այդ ուժերը, բայց առիթներ չըկան: Երեխան աշխատանք է ուզում, որովհետև գիւղացի է, որովհետև լաւ սնուած է, այն ինչ այդ փրկարար աշխատանքը վատրուած է որբանոցներից:

Անգործութիւնը բոլոր մեղքերի հիմքն է, ընգոճուած է առել: Ժողովրդական այս ասացուածքի մէջ մեծ փրկութիւն կայ: Այս խնդրում մենք կանգնած ենք մի մեծ վշտանդի առաջ: Որբանոցների ոգին գարծնական ջե. երեխան այս կերպ չի կարող նախապատրաստուել սպաղայ կեանքի համար: Ամեն մի երեխայ մի կոչումի համար պէտք է նախապատրաստուէ, մանաւանդ որը երեխան, որն աւելի շուտ պէտք է իր ամենօրեայ հացի մասին մտածէ, քան ծնողատէր երեխան: Երեխաներին «մի կտոր հացի տիրացնելու» մասին լըրջօրէն պէտք է մտածենք հէնց այժմեանից, իսկ այդ հնարաւոր է, եթէ որբանոցներում մացենք արհեստներ և ուղղագործութիւն: Չպէտք է մոռանանք, որ երեխաներն սպրելու են գիւղերում կամ գաւառական գիւղանման քաղաքներում գըլխաւորապէս. իսկ այդպիսի պայմանների համար վերոյշեալ զբաղմունքներն անհրաժեշտ են:

Այս ստելով ի հարկէ, միտք չունիմ պնդելու, թէ ուսումն անհրաժեշտ մի բան չէ. հասկանալի է, որ արհեստաւորին և աշքարաց գիւղացուն ուսումն այնքան հարկաւոր է, որբան մի այլ դասակարգի մարդու. բնական է ուրեմն, որ որբանոցներում ուսման գործն շատ լաւ հիմքերի վրայ է գրուե-

լու: Ուսում և արհեստ, արհեստ և ուսում, սրանք իրարից անկախ չեն լինելու, իրար լրացնելու են:

Երեխաների համար արհեստներ ընտրելիս, աչքի առաջ պէտք է ունենալ նախկին Տաճկահայաստանի շուկան, կեանքը, պահանջները: Ալէքսանդրապոլի որբանոցներից մէկում սովորեցրել են վեներական աթոռների նստատեղիներ հիւսել, ոչինչ չսովորեցնելուց լաւ է սա ի հարկէ, սակայն հարց է, թէ արեմտահայ երեխայի համար այդ արհեստն որքան այժմէական նշանակութիւն ունի: Գիլիջանում մի գործարան է հիմնուում վեներական կահկարասիք պատրաստելու համար, նոյնպէս մտածելու բան է, թէ որքան գործնական բնոյթ ունի նաև այս ձեռնարկութիւնը: Բնաւ չեմ ցանկանում ասել, թէ այդ գործերն աւելորդ են, այլ միայն ուզում են մատնացոյց անել, որ արհեստներ ընտրելու խնդիրն էլ լուրջ քննութեան արժանի մի հարց է: Այս ուղղութեամբ խորհրդակցութիւններ ևս անհրաժեշտ են:

Այժմ տեսնենք, թէ արհեստների գործը մեր որբանոցներում ինչպէս է զրուած. եթէ աղջիկների թեթև ձեռագործի աշխատանքները մի կողմ թողնեմ, կարող եմ ասել, որ արհեստներ չկան Քիֆլիսի, Իզդիրի, Աշտարակի, Էյմիածնի, Ախտայի, Նոր-Բայազէտի, Քարվանսարայի, Գանձակի, Ղարաբիլիսայի (Պետրոզդարալի կոմիտէի) Ախալքալակի որբանոցներում *):

Գիլիջանում կոշկակարութիւն սովորում են 24 հոգի, գործարանային արհեստհիւանութիւն և ազարակազիտութիւն՝ մօտ 34 հոգի, 120 աղջիկ սովորում են կար ու ձև և ձեռագործ: Երևանում մօտ 30 հոգի սովորում են կոշկակարութիւն և հիւսնութիւն: Ախալքալայի որբանոցից հինգ երեխայ տեղական արհեստաւորների մօտ արհեստ են սովորում: Ալէքսանդրապոլում մօտ 20 երեխայ սովորում են կոշկակարութիւն և աթոռի նստատեղիներ հիւսել: Այս բոլոր արհեստ սովորող երեխաների թիւն է միասին 233. Այս արհեստները սովորում են շատ թերի և անկատար:

Սա արդէն մի շատ ողորմելի թիւ է: Որպէս զի տեսական չլինի մեր այս պնդման իմաստը, տալիս ենք բոլոր որբանոց-

*) Նոյն վիճակի մէջ են նաև Բաթումի, Բագուի, Սահահնի որբանոցները:

ների այն երեխաների ցուցակը, որոնք կարող էին արհեստ սովորել. հաշուած են 11-ից աւելի տարիք ունեցող երեխաները:

| | Տղայ | Աղջիկ | | Տղ. | Աղջ. |
|-------------|------|---------------------|---------------|------|------|
| Թիֆլիս | 162 | 169 | Ախալքալակ | 34 | 18 |
| Դիլիջան | 243 | 197 | Ալէքսանդրապոլ | 94 | 56 |
| Փանձակ | 33 | 33 | Աշտարակ | 112 | 82 |
| Ղարս | 7 | 5 | Էջմիածին | 63 | 43 |
| Ղարաքիլիսա | 17 | 29 | Երևան | 105 | 127 |
| Նոր-Բայազէտ | 89 | 28 | Իզմիր | 14 | 11 |
| Քարվանսարա | 16 | 11 | Ախաս | 29 | 22 |
| Ախալցխա | 31 | 7 | | | |
| | | Միասին . . . | | 1049 | 838 |
| | | Բոլորը միասին . . . | | 1887 | հոգի |

Ահա այսքան հոգուց սովորում են արհեստ միմիայն 233 հոգի միթէ սա մի ողորմելի թիւ չէ:

Վերջ պէտք է տալ այս գրութեան. առանց այն էլ մեր հայկական կրթական ոգին շատ է տեսական, անգործնական, որից քիչ չէ տուժում մեր հասարակութիւնը: Այս նոր հաստատութիւններից գոնէ հեռու պահենք այդ անթոյլատրելի ոգին: Գործնական լինենք և երեխաներին գործնական կրթութիւն տանք. այդ է պահանջում նրանց ապագան:

5. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾ

Դպրոցական գործը զանազան ձևակերպման է ենթակալ հղել որբանոցներում. մէկ տեղ որբանոցի երեխաներից կազմուած դասարանները միացած են հղել տեղական եկ.-ծխական դպրոցին, իբրև նրա մի մասը, օր. Նոր-Բայազէտում, մի այլ տեղ որբանոցի երեխաները յաճախել են նոյն տեղի դպրթականական դպրոցները, օր. Փանձակում, Քարվանսարայում, Իզմիրում, Բաքում. մի քանի տեղեր էլ հղել են յատուկ որբանոցային կենտրոնական դպրոցներ. օր. Դիլիջանում, Աշտարակում, Էջմիածնում: Թիֆլիսի որբանոցների պարապմունքները տեղի են ունեցել որբանոցների շէնքերի մէջ, ամեն մի որբանոց ունեցել է իր յատուկ ուսուցիչը կամ ուսուցիչները: Այս կերպ է կազմակերպուած հղել գործն որբանոցների ձեռամասնութեան մէջ:

Երևանի որբանոցներից մէկում տեղաւորուած են եղել որ. Ա. և Բ. բաժանմունքները, միւս բաժանմունքները եղել են միւս որբանոցներում: Ամեն մի որբանոցի տարրեր պատրաստութիւն ունեցող երեխայ գնացիլ է դաս առնելու այն որբանոցը, ուր տեղաւորուած է եղել իրեն համապատասխան դասարանը:

Այս բոլորից երևում է, որ դպրոցական գործը զանազան ձեւակերպումներէ ենթակայ եղել: Պէտք է ասեմ, որ ուսման գործը գոտայ ընդհանրապէս անբաւարար վիճակի մէջ. չկայ որոշ ծրագիր, ուժեղ ուսուցչական կազմ, չկան դպրոցական անհրաժեշտ պիտոյքներ, չի եղել կանոնաւոր վերահսկողութիւն այդ դպրոցների վրայ: Դպրոցական գործը փոքր ի շատէ կանոնաւոր է եղել Աշտարակի, Բագուի, Դիլիջանի, Էջմիածնի և Քիֆլիսի մի քանի որբանոցներում: Մնացած որբանոցների պարագմունքները պէտք է համարել հազիւ բաւարար, կամ բոլորովին թոյլ:

Սա մի շատ ցաւալի երևոյթ է: Այս կերպ անկարելի է շարունակել գործը: Առաջին, կազմակերպչական տարուց բընական է, որ շատ բան սպասել անկարելի էր, բայց այսուհետև գոնէ շատ մեծ փոփոխութիւններ պէտք է մտցնել դպրոցական գործի մէջ:

Այդ փոփոխութիւնները տեղի են ունենալու հետեւալ ուղղութեամբ.

ա) Պէտք է բարձրացնել ուսուցչութեան որակը և քանակով շատացնել ուսուցիչների թիւը մանաւանդ այն որբանոցներում, ուր արհեստներ չեն մտցուելու:

բ) Հոգալ է պէտք, որ հարկաւոր կամ տանելի պայմանների մէջ դրուի դպրոցական պիտոյլների խնդիրը, գոնէ ամենանհրաժեշտ իրերը լինեն պարագմունքների ժամանակ: Անդրատախտակ, անմատիտ որբանոցներ անգամ եղել են:

գ) Կազմակերպել գրադարաններ, որոնք այնքան անհրաժեշտ են որբանոցների համար.

դ) Պէտք է կազմել գաղթականական և որբանոցների զըպրոցների համար ուսման յատուկ ծրագիր, առաջնորդ ունենալով մեր եկ. ծխական դպրոցների ներկայ ծրագիրը: Այդ ծըրագրի մէջ առանձին ուշադրութեան են արժանանալու գործնական արժէք ունեցող առարկաները՝ մանաւանդ հայոց լեզու և թուարանութիւնը:

Բացի այդ, ի նկատի պէտք է ունենալ արհեստներ սովորող երեխաների շահերը, նրանց համար զպրոցական մի այլ ծրագիր պէտք է կազմել: Միտք չունի նրանց զբաղեցնել օրական հինգ ժամ զպրոցական պարապմունքներով, ամենաշատը 3 ժամը բաւական է: Եւ որովհետեւ պարապմունքի այդ ժամերը քիչ են, այդ պատճառով էլ պէտք է լրջօրէն մտածել այն մասին, թէ զպրոցական ինչ առարկաներ զերադասուին և ամեն մի առարկայի շարաքական քանի ժամ յատկացուի: Այս խնդիրները մշակելու համար պէտք է կազմել մի յատուկ յոնձնաժողով:

և) Որբանոցների զպրոցների կազմակերպութեան հարցն ևս ուշադրութեան արժանի խնդիր է: Յանկալի է կենտրոնական որբանոցային զպրոցներ ունենալ այնպիսի տեղերում, ուր շատ որբանոցներ կան համախմբուած. օր. Դիլիջանում, Աշտարակում, Թիֆլիսում, Երևանում, Նոր Բայազետում և այլն. մի քանի տեղեր այս միտքը իրականութիւն է գտել, ինչպէս ասացի:

Կենտրոնական զպրոց յատուկ շէնքով ոչ միայն այն պատճառով է ցանկալի, որ ուսման գործը լաւ հիմքերի վրայ կը դրուի, ուսուցչական ուժեղ խումբ կը կազմուի, վերահսկողութիւնը կը դիւրանայ, այլև այն պատճառով, որ այդ կերպ երեխաները օրական գոնէ 4—5 ժամ դուրս կը գան որբանոցի սենեակներէց և բակից և մի նոր շրջապատի և մթնոլորտի մէջ կը մտնեն: Այս պայմանները թարմացուցիչ կազդեն երեխաների վրայ: Հէնց այս պատճառով էլ ցանկալի է կենտ մնացած որբանոցներն անգամ իրենց պարապմունքների համար ջոկ շէնք, կամ սենեակներ վարձեն:

զ) Այն տեղերը, որտեղ գաղթական երեխաներ կան, ցանկալի է նոյն խի, որ այդ երեխաների և որբանոցի երեխաների համար մի ընդհանուր զպրոց հիմնուի: Չպէտք է կտրել երեխաներին իրենց հայրենի հարազատ շրջապատից և ազատ կեանքից եկող երեխաների հետ շփումն ունենալու հնարաւորութիւնից: Հիւանդութիւնները գուցէ վտանգաւոր դասնան, բայց զգուշական միջոցները կարող են այդ վտանգի առաջն առնել:

է) Եթէ հանգամանքները թոյլ են տալիս, կարելի է որբանոցի երեխաներին ուղարկել եկ. ծխական զպրոցները, կամ յատուկ դասարաններ կազմել և կցել ծխական զպրոցին:

ը) Որբանոցների դպրոցական գործի վրայ վերահսկողութիւն կունենայ ապագայում կազմուելիք որբանոցային յանձնաժողովը, իսկ եթէ սա շրջիկ պաշտօնեաներ չունենայ, կարելի է յանձնել նաև գաղթականական դպրոցների համար կազմուելիք դպրոցական խորհրդին, եթէ սա աւելի մեծ յարմարութիւններ ունենայ: Այսպէս թէ այնպէս, դպրոցական գործի վրայ այսուհետև շատ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել:

թ) Ընդհանրապէս դիտուած է, որ երեխաները մեծ սէր են ցոյց տալիս ուսման և նրանց մէջ քիչ չեն առանձնայատուկ ընդունակութիւնների տէր երեխաները: Այսպիսի երեխաների միջնակարգ կրթութիւն ստանալու մասին հէնց այժմեանից պէտք է լրջօրէն մտածել: Պէտք է թիֆլիսում և Երեւանում, ուր կան օրիորդաց և տղայոց միջնակարգ դպրոցներ, բնաւ յատուկ որբանոցներ, որի երեխաները աշակերտելու են այդ միջնակարգ դպրոցներում: Վերաշինուելիք հայրենիքի համար ուսուցչացուներ և գաւառական գործիչներ այժմեանից պէտք է պատրաստել:

6. ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈՅԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Դպրոցական և կրթական գործին մեծապէս վնասում է երեխաներին որբանոցից որբանոց, տեղից տեղ տեղափոխելու երևոյթը: Այս տեսակէտից մեր որբանոցները մշտական եռման մէջ են, գալիս ու գնում են երեխաները հիւանդութեան, որբանոցներում տեղ չըլինելու, ժամանակաւորապէս պատուարուելու, այս կամ այն որբանոցի մէջ թուական հաւասարակշռութիւն ստեղծելու, վատ կամ չար երեխաներից ազատուելու, որոշ տարիքի երեխաների թիւը քչացնելու և այլ պատճառների շնորհիւ: Գաղթական երեխաներն ենթակայ են մի ներքին, այսպէս կոչուած որբանոցային գաղթի:

Սա մի շատ վտանգաւոր սովորութիւն է: Կտաւարչուհիներն ու երեխաները սովորում են իրար, սիրում են իրար և անա մի օր տեղի է ունենում բաժանումը. երեխան այժմ պէտք է յարմարուի նոր պայմաններին, նոր ուժիմի: Գտտահել եմ այնպիսի երեխաների, որոնք մի տարուց էլ աւելի պակաս ժամանակում մի քանի գոյգ որբանոցներ են փոխել:

Դիտուած է, որ կիանքի պայմաններն այդքան շուտ-շուտ փոխած երեխաները ընդհանրապէս թեթևաբարոյ և մակերևոյ-

ժայլնն են դառնում, սիրով չեն կաշոււմ մի բանի և սիրում են
ուտ շուտ փոխել իրենց զբաղմունքները:

Այսուհետև պէտք է ունենալ մնայուն, կայուն խումբ որ
բանոցի երեխաների: Ծայրագոյն անհրաժեշտութեան գէպքում
թոյլատրելի է երեխաների տեղափոխութիւնը:

Շատ տեղեր անմիտ, աննպատակ տեղափոխութիւններ են
կատարուել այն պատճառով, որ որբանոցի վարիչները տեղա-
փոխութեան մէջ ոչ մի միասակար բան չեն նկատել: Հէնց այդ
պատճառով իմ առաջարկած մտքով հրահանգը կարող է ցան-
կալի ազդեցութիւն թողնել չիմացողների վրայ:

7. ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Արդէն խօսել եմ երեխաների առողջութեան մասին զբա-
լան մտքով, բայց այժմ պէտք է արձանագրեմ մի շատ տը-
խուր փաստ. երեխաների մէջ մեծ չափերով տարածուած են
կաշուի հիւանդութիւններ, այն է՝ լիշայ, քաշայ, բորոտութիւն,
և այլն: Համարեա ամեն մի որբանոցում քիչ կամ շատ չափե-
րով տարածուած են այդ հիւանդութիւններն: Անկասկած է, որ
երեխաների Վ-ն ունի կաշուի հիւանդութիւններ:

Մասնացոյց պէտք է անեմ մի աւելի տխուր փաստի վը-
րայ. հաստատապէս կարող եմ ասել, որ կաշուի հիւանդու-
թիւններն որբանոցներում ոչ թէ թուլացել, այլ աւելի են զօ-
րեղացել: Վարակուսներն աւելացել են հէնց որբանոցների մէջ:

Արդէն ասել եմ, որ որբանոցներում իշխում է ցանկալի
մաքրութիւն, սնոււմ են երեխաներն ոչ վատ. ապա ինչո՞վ բա-
ցատրել այս տխուր երևոյթը:

Որբանոցների անկողիները, երեխաների շորերը մաքուր
են, բայց առողջապահական պայմաններին համապատասխան
կերպով չեն պահոււմ. այսպէս օր. հիւանդների և առողջների
շորերը չեն համարազրուած, յուանալուց յետոյ մէկը հազնում է
միւսի շորերը, կառավարչուհիները շատ տեղեր ոչ մի հասկա-
ցողութիւն չունին առողջապահական պահանջների մասին, հի-
ւանդին և առողջին ջնեցնում են ոչ միայն նոյն սենեակում,
այլև նոյն մահճակալի վրայ, գլուխները խուզել են տալիս նոյն
մեքենայով, առանց ձեռքերը մաքրելու՝ սրահրա գլուխն են
քսում և այլն: Ահա և հանգամանքներ, որոնք մեծապէս նը-
պաստում են հիւանդութիւնների տարածման գործին:

Այս բոլորի վրայ աւելանում է մի այլ բան էլ շատ տեղեր երեխաները ենթակայ չեն կանոնաւոր բժշկութեան, պարտականութիւն յանձն առած մի քանի բժիշկների գործին մատի արանքներով նայելու, կամ յարմարութիւններ չունենալու պատճառով:

Կը ցանկայի մատնացոյց անել մի քանի այլ հակաառողջապահական պայմանների վրայ ևս որբանոցների ննջարաններում ընդհանրապէս նեղուածք է նկատուում, մահճակալները իրար շատ մօտ են դարսուած, նոյնիսկ շատ տեղեր բոլորովին իրար կոցրած են: Շատ տեղեր կանոնաւոր վառարաններ չկան, ուրեմն ձմեռը թիթեղեայ վառարաններ են գործածելու, որը ցանկալի չէ ի հարկէ: Եթէ զուտ գիտական-առողջապահական տեսակէտից նայելու լինենք գործի վրայ, ապա պէտք է ասենք, որ մեր բոլոր որբանոցներում տեղի նեղուածք կայ, որովհետև ամեն մի սենեակի մէջ աւելի քանակով մահճակալներ կան, քան թոյլ կը տար բժշկականութիւնը: Չմեռն այդ նեղուածքն աւելի է զգալի լինելու, բայց ընակարանային ճրգնածամբ, որը կայ նաև գաւառում, աչքի առաջ ունենալով՝ անկարելի է խտտապահանջ լինել:

Այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով՝ կարելի է առ այժմ հետևելու ուղղութեամբ աշխատել. ա) կառավարչութիւններին և նրանց օգնականներին պէտք է ծանօթացնել առողջապահական կանոնների և կաշուի հիւանդութիւնների էութեան և խնամքի ձևերի հետ: Այս գործին օգնելու է որբանոցի բժիշկը:

բ) Աւելի մեծ կոնտրոլի պէտք է ենթարկել որբանոցների բժիշկների աշխատանքը և աւելի խտտապահանջ լինել որբանոցների առողջապահական պայմանների մասին:

գ) Պէտք է հրաւիրել Թիֆլիսում բժիշկների խորհրդակցութիւն, ուր մշակուելու են որբանոցների համար առողջապահական կանոններ: Այդ կանոններն ուղարկուելու են բոլոր որբանոցներին:

դ) Կաշուի հիւանդութիւն ունեցող երեխաներին պէտք է առանձնացնել ջուկ որբանոցների մէջ և նրանց վրայ բժշկական առանձին խնամք տանել: Այս հիւանդութիւններից մի քանիսի բուժումը նոյն իսկ մի քանի տարուայ աշխատանք է պահանջում:

և) Թիֆլիսում, կամ մի այլ յարմար տեղ, պէտք է հիմնել աննորմալ (կոյր հոգեկան հիւանդ. սպուշ, խուլ կամ համբ) կրեխաների համար յատուկ հիւանդանոց որբանոց:

Կազմակերպչական խնդիր

1. ԿԱԶՄԱՆԵՐՊՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԸ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Կազմակերպչական գործի մէջ ևս մեր օրբանոցները ցոյց են տալիս զգալի թերութիւններ:

Այս նոյն գործի շուրջը համախմբուած են այնքան ընկերութիւններ, որոնք իրենց շատութեամբ շէնքնու են դիտողին. ահա և այդ ընկերութիւնների շարանը. Կենտրոնական կոմիտէ, որը տեղ-տեղ հանդէս է գալիս իրրե Բարեգործական ընկերութիւն, Եղբայրական օգնութիւն, որի էջմիածնի և Երևանի ճիւղերը նման են անկախ ընկերութիւններին, Միացեալ Ընկ Ալէքսանդրապօլում, Պետրոգրադի կոմիտէ, Մոսկուայի կոմիտէ, Բագուի կոմիտէ, Գանձակի գաղթականական կոմիտէ, Կանանց կոմիտէներ (Թիֆլիս, Ալէքսանդրապօլ), Ծխական համայնք, Օրիորդաց կոմ, անհատ խնամակալներ և այլն: Արբանցից ամեն մէկը մի խնքնուրոյն, անկախ գործող կազմակերպութիւն է: Ոչ մի կերպ չի ներդաշնակած այս կազմակերպութիւնների գործունէութիւնը: Յօգուտ մրցութեան սկզբունքի չի խօսում յամենայն դէպս ընկերութիւնների այսպիսի յօգնակիութիւնը:

Այս բոլորի հետեանքն այն է լինում, որ գործերի մէջ մի ընդհանուր ոգի չի մտնում. մէկի լաւը մնում է իր գործունէութեան շրջանում, միւսի վատը չի ուղղում միւս կազմակերպութիւնների աջակցութեամբ. այդ պատճառով էլ որբանոցների կեանքի մէջ չի մտնում ցանկալի միօրինակութիւն: Չի կարելի ասել, թէ այդ ընկերութիւններն իրարարից բաժանուած են չինական պատնէշներով, նրանք, ի հարկէ, իրարից օգուտու են, իրար վրայ ազդում են, բայց ոչ թէ որոշ

ծրագրով, այլ պատահականօրէն, անսխտեմ և այն էլ շատ
չնչին չափերով:

Եթէ անհնար է վերջ տալ այս բազմաթիւ ընկերութիւն-
ների որբանոցային գործունէութեան, դոնէ պէտք է ստեղծել
մի կենտրոնական կազմակերպութիւն, որը ղեկավարելու է որ-
բանոցների ընդհանուր բնոյթ կրող խնդիրները՝ կրթական
գործ, արհեստներ, ընդհանուր պաշտօնէութիւն, տեսուչ, ընդհա-
նուր համագումարներ և այլն:

Գանք աւելի մասնաւոր հարցի՝ Պենտրոնկական կոմիտէի
որբանոցներին: Այստեղ ևս նկատոււմ է միօրինակ ոգու բա-
ցակայութիւն նոյն ընկերութեան հսկողութեան տակ զըտ-
նուող որբանոցների մէջ: Դիլիջանի, Ալէքսանդրապոլի, Քար-
վանասարայի, Գանձակի, Ղարսի, Թիֆլիսի որբանոցների մէջ
զգալի տարբերութիւններ կան շոքեղէնի, մաքրութեան, անու-
ղի, արհեստների, կրթական-դպրոցական գործի և այլ խնդիր-
ների մէջ: Ամեն մի որբանոց աճել ու զարգացել է տեղական
ուժերի կարողութեան և կրթութեան, նախաձեռնութեան և աշ-
խատասիրութեան քանակի համապատասխան կերպով: Գլխա-
ւոր ծանրութիւնը ընկած է եղել նրանց վզի վրայ:

Կենտրոնական կազմակերպութիւնը ազդել է անսպասման
այդ որբանոցների կեանքի վրայ, բայց իմ կարծիքով ոչ զգա-
լի և ցանկալի չափերով: Եւ այդ ազդեցութեան փորձերի յա-
ջորդականութեան մէջ չեւ նկատել կայունութիւն և կուռ ծը-
րապիր:

Որբանոցների գոյութեան առաջին տարում, երբ մտա-
զրադման առարկան կազմել է երեխաների ֆիզիքական գոյու-
թեան խնդիրը, բնական է, որ մարդ խստապահանջ չափա-
նիշներով չի մօտենում գործին, բայց եթէ գործը այս կերպ
առաջ գնայ և իմ մատնանշած պակասութեւնները մնան հրա-
պարակի վրայ, այն գէպքում, ճիշտ որ, ծանր խնդիրների ա-
ռաջ գրուած կըլինին որբանոցները:

Ինչպէ՞ս կազմակերպել գործը: Որբանոցներն օր օրի վը-
րայ շատանում են, դադթականական գործը բարդանում է.
Կենտրոնական կոմիտէի զրադման խնդիրներն դառնում են
բազմազան և քանակով շատ մեծ: Կենտրոնական կոմիտէն ա-
ռանց յատուկ յանձնաժողովների չի կարող եղած կարիքներին
լիակատար բաւարարութիւն տալ: Կոմիտէի և Բարեգործական

Լնկ. գաւառական ձիւղերը զժգոհում են, որ կենդանի, աշխոյժ հոգեկան հաղորդակցութիւն չըկայ կենսարոնի և ձիւղերի մէջ:

Այս բոլորը գալիս են հաստատելու, որ պէտք է կազմել մի որբախումամ յանձնաժողով կենսարոնական կամիտէի վերահսկողութեան տակ: Այս որբախումամ յանձնաժողովին պէտք է լիակատար ազատ գործունէութեան հնարաւորութիւն տալ իրականացնելու անկախօրէն այն հիմնական սկզբունքներից բղխող պահանջները, որոնք ընդունել են կենսարոնական կամիտէի հետ խորհրդակցելուց յետոյ: Սկզբունքները, հիմնական, մեծ պատասխանատուութեան հետ կապուած հարցերը վճռել միասին, իսկ գործադրութիւնն ու որբանոցների ներքին, ընթացիկ կեանքի հետ կապուած խնդիրները թողնել յանձնաժողովին:

Այս որբախումամ յանձնաժողովի կազմակերպութեան մանրամասնութիւնների, անդամների իրաւունքների և պարտականութիւնների մասին մանրամասն խօսելու տեղը չէ այժմ. սակայն պէտք է ասեմ, որ անդամներից մէկը, կամ մի քանիսը պէտք է վարձովի, միմիայն այդ գործով զբաղուող անհատներ լինին: Գոնէ մի այդպիսի անդամ պէտք է ունենայ այդ յանձնաժողովը, որպէս զի գործերն աւելի լաւ ընթացքի մէջ մըտնեն: Ազատ ժամերը միայն որբանոցի յանձնաժողովին նուիրող անդամները չեն կարող զգալի մի բան անել:

Որբանոցների և որբախումամ յանձնաժողովի մէջ կենդանի կապ է պահելու որբանոցների քնդհանուր տեսուչը, որի անհրաժեշտութեան և կատարելիքի մասին առանձին ասելու բան չունիմ, այնքան պարզ է խնդիրը: Գուցէ հնարաւոր լինի գաղթականական դպրոցների և որբանոցների ընդհանուր տեսչի պաշտօնը տալ մի անձի:

2. Որբանոցի պաշտօնէութիւնը. Որբանոցների կազմակերպութեան մէջ պէտք է բարեփոխութիւններ մտցնել: Բոլոր ցանկութիւնների, աշխատանքների վերջնական նպատակը որբանոցի բարեկարգութիւնն է բնականօրէն: Որբանոցը պակասութիւններ շատ ունի, մի քանիսի մասին խօսել եմ, մի քանիսի մասին յետոյ կըխօսեմ: Որբանոցում աշխատում են խնամակալութիւնները, կառավարիչները, հասարակ ծառայողները, տեղական տեսուչները. սրանց մասին կը խօսեմ այժմ:

Ա. Խնամակալութիւն-վարչութիւն. Որբանոցների վրայ

անմիջօրէն վերահսկում են տեղական վարչութիւնները, (Բարեգ. Լ'նչ. Վարչ., Կաղթականական կոմիտէներ, Կանանց կոմիտէներ և այլն): Մի քանի տեղ էլ վարչութիւններ չըկան, այլ վերահսկողութիւնը յանձնուած է մի կամ մի քանի տիկինների. օր. Թիֆլիսում, ուրեմն ընտրովի, կամ նշանակովի մարմիններ, կամ անձեր են: Մի քանի տեղ էլ այլ կերպ է կազմակերպած գործը. Իգդիրում վարչութիւն չըկայ, վերահսկում է միայն տեղական լիազօրը, վարչութիւն կազմելու փորձեր է եղել, բայց չեն ապրել այդ վարչութիւնները: Երևանում կայ որբախնամ վարչութիւն, բայց ամեն մի որբանոցի համար ընտրուած են մի կամ երկու տիկին, իբրև խնամակալուհիներ: Պետրոզքաղի կոմիտէի Ղարաքիլիսայի որբանոցի խնամակալը ևս նշանակուած է կոմիտէից. Գիլիջանում այլ կերպ է կազմակերպուած այնտեղ չըկայ տեղական վարչութիւն, այլ կան վարձուած ծառայողներ (ընդհանուր կառավարիչ և տեղական լիազօր):

Ինձ թուում է, որ տեղական մեծ վարչութիւն չունեցող որբանոցների մէջ, ուր վարձուած անհատներ են աշխատում, բարեփոխութիւններ մտցնելն աւելի դիւրին կը լինի, բայց որովհետև այս ուղղութեամբ փորձ շատ քիչ է եղել և եղածն էլ (Գիլիջան) դեռ կարճատև կեանք ունի, այդ պատճառով էլ դժուարանում եմ մի վերջնական ընտրութիւն անելու այս սխտեմների մէջ: Մնդիրը լուրջ է և առաջարկում եմ Կենտրոնական կոմիտէից քննութեանը:

Տեղական խնամակալութիւններ և վարչութիւններ անհրաժեշտ են մանաւանդ այն տեղերը, ուր մի կամ երկու որբանոցներ կան և անկարելի է կառավարիչ պահելը: Յանկալի է վերջ տալ նշանակովի և բարեգործութիւն արած լինելու պատճառով ինքնըստինքեան «դարձած» խնամակալութիւնների սխտեմին: Գործին պէտք է հասարակական բնաւորութիւն տալ, ընտրովի վարչութիւններ կազմել, որոնք պատասխանատու են ոչ միայն կենտրոնական կազմակերպութիւններին, այլ և տեղացի իրենց ընտրողների առաջ: Եթէ գործով մօտ հետաքրքրուողներ լինեն, կը նկատուի իսկոյն, որ տեղ-տեղ այսպէս կոչուած խնամակալուհիները սկսում են երբեմն փոքրիկ չարիքներ դառնալ:

Մի ցաւալի բան եմ նկատել թէ Թիֆլիսում և թէ գաւառում, նոյն տեղում գործող որբանոցների տարբեր ընկերու-

թիւնների յանձնաժողովները սերտ յարաբերութիւն չունին իրար հետ. որ, Քանձակի Քաղթականական կոմիտէի և Բարեգ, Ընկ., Նոր-Բայազէտի Եղրայրական օգնութեան և Բարեգ, Ընկերութեան վարչութիւնները, Թիֆլիսի խնամակալութիւնները, կոմիտէները և այլն: Սրանք իրար թշնամաբար չեն վերաբերում, բայց և մի գործի շուրջը սիրով չեն համախմբում, նոյն իսկ այնպիսի տեղեր, ուր հասարակական գործիչների թիւը շատ է քիչ:

Կապը բացակայում է ոչ միայն կենտրոնական, այլ և քառառական-տեղական կազմակերպութիւնների մէջ: Սա մի ցաւալի երևոյթ է, որի առաջը պետք է առնել: Շատ անգամ տեղական գործիչները զգում են համերաշխ գործունէութեան կարիքը, իմ կատարած մի բանի փորձերը ցոյց տուին, որ այս ուղղութեամբ կարելի է ցանկալի արդիւնքների հասնել:

Առաջարկում եմ կանոնադրական մի քանի յօդուածներ, որոնք պարզում են խնամակալութեան բնոյթը:

1. Խնամակալութեան վերահսկողութեանն են ենթարկւում և նրա առաջ պատասխանատու են որբանոցի բոլոր պաշտօնեաները: Նա հսկում է, որ բոլոր պաշտօնականներն անթերի կատարեն իրենց պարտականութիւնները:

2. Խնամակալութիւնը հրաւիրում և պատճառարանուած հիմունքով արձակում է որբանոցի բոլոր ծառայողներին, բացի ընդհանուր կառավարչից և ուսուցչից: Սրանց ընտրութեան կամ արձակման որոշումը հաստատում է կենտր. կոմիտէն:

3. Որբանոցի բոլոր անտեսական և այլ կարիքները հոգացում են խնամակալութեան աջակցութեամբ, կամ գիտութեամբ:

4. Խնամակալութիւնը ունենում է պարբերական նիստեր: Ամեն մի նիստի որոշումներն արձանագրւում են:

5. Խնամակալութիւնը պաշտօնական արձանագրութեամբ հաստատում է որբանոցի ինվետարի ցուցակը, փչացած և կորած իրերի մասին արձանագրութիւն է կազմում և երբեմն պաշտօնապէս ստուգում ինվետարը:

6. Մեծարժէք գնումներ կատարում են խնամակալութեան անդամների մեծամասնութեան ներկայութեամբ: Նա պատասխանատու է որբանոցի հաշիւների համար:

7. Խնամակալութիւնը որբանոցի բոլոր գործերի համար

պատասխանատու է կենտրոնական կոմիտէի և իրեն ընտրող հասարակութեան առաջ, որոնց պարբերաբար հաշիւ է տալիս իր գործունէութեան մասին:

Այս բոլորից պարզուժ է, որ խնամակալութիւնը մեր ծխական դպրոցներէ հոգաբարձութեան նման մի մարմին է: Խնդրի մանրամասնութիւններէ մէջ մտնելն աւելորդ եւ համարում այժմ:

Բ. Տեղակիսն ընդ ի սուր կառավարիչ-Բազմաթիւ որբանոցներ ունեցող (երեքից սկսած) տեղում պէտք է լինեն յատուկ ընդհանուր տեղական տեսուչներ կամ կառավարիչներ: Որբանոցի ընդհանուր հարցերը, ինչպէս և մասնաւոր խնդիրները սա է հոգում, միօրինակութիւն մտցնում, տեղեկագիրներ տալիս կենտրոնին, կենտրոնի կարգադրութիւնները իրագործել տալիս, վերահսկում որբանոցների վրայ ընդհանրապէս: Եթէ բոլոր անհրաժեշտ տեղերն այդպիսի օրաշտօնական լինին, այն դէպքում նոյն իսկ կտրելի է որբանոցների ընդհանուր տեսուչ չունենալ, եթէ ի հարկէ, ահաջի ծախքի զուրը մեծ դժուարութեամբ է ճարուում:

Տեղական ընդհ. կառավարիչ կայ Երկրջամում, վերջերս նաև Ալեքսանդրապօլում: Պէտք է այդպիսի օրաշտօնականներ ունենալ Թրիֆլիսում, Նոր-Բայազետում և Փանծակում, այս վերջին երկու տեղերում որբանոցների թիւը մի փոքր շատացնենելուց յետոյ:

Գ. Կառավարիչ կամ կառավարչուհի. Որբանոցի սգինկեանքը կառավարչուհին է: Նա պէտք է սէր ու գութ ունենայ մօր պէս, կրթութիւն ու դաստիարակութիւն պէտք է ունենայ՝ կրթելու, դաստիարակելու երեխաներին, զարգացում պէտք է ունենայ՝ հասկանալու որբանոցների կոչումը, նպատակը, ընդհանուր ուղղութիւնը: Միջնակարգ կրթութիւնը մինիմալ պահանջ է նկատուելու որբանոցի կառավարչուհու օրաշտօնի համար:

Բացի այդ, նա պէտք է հայկական կրթութիւն ունենայ, հասկանայ հայ իրականութիւնը, ծանօթ լինի նրա լիզուին, ծանօթ լինի հայ ժողովրդի անցեալին և ներկային, մանաւանդ ցանկութիւն ունենայ ծանօթանալու արևմտահայ կեանքի հետ: Այս ցանկութիւններին չբաւարարող կառավարչուհիները տեղ չըպէտք է ունենան որբանոցների մէջ: Այդպիսի-

ների թիւը բիշ չէ. ուշադիր գիտողութիւնից յետոյ կարելի է գտնել նրանց:

Տեսածս որբանոցների կառավարչութիւններից 39 հոգի ուսասնայիբ են, իսկ 12 հոգի տաճկահայեր: 39 ուսասնայիբից 14 հոգի ծխական զպրոցներից են, մի քանիսը հազիւ գրագէտներ են. 6 հոգի գիմնադիւանից են, (լրիւ դասընթաց) 7 հոգի թերի կրթութեամբ (գիմնադիւանի 3-րդ, 4-րդ, 5-րդ դասարաններից), Գայիանեան շրջաններից՝ 5 հոգի, Յովնանեան շրջաններից՝ 2 հոգի. ուսուցչական ցենզով՝ 2 հոգի. մէկը քաղաքային զպրոցից, մէկը Ալէքսանդրապոլի Արղութեան զպրոցից, մէկը Ֆեռեքական կուրսերից: Ուրեմն սրանցից հազիւ 14 հոգի միջնակարգ կրթութիւն ունին, մնացածների կրթութիւնը անբաւարար է: Տաճկահայ կառավարչութիւնները իրենց կրթութեամբ աւելի լաւ մակարդակի վրայ չեն գտնուում:

Չանադան հանգամանքներ ի նկատի ունենալով իմ տեսած կառավարչութիւններից 21 հոգի միանգամայն իրենց տեղումը չեն իմ կարծիքով, չորս հոգու մասին կասկած ունիմ, իսկ մնացածները տանկիւր կամ լաւ են:

Սրանք ի հարկէ անձնական տպաւորութիւններ են, որոնցից շատերը հիմուուած են ոչալ տուեալների վրայ: Այսուհետև շատ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել կառավարչութիւնների հարցի վրայ:

Քանի որ խօսքը կառավարչութիւնների մասին է, այդ պատճառով էլ մի այլ հարցի մասին ևս մի քանի խօսք ասել կուզէի: Երեխաների և դործի շահը պահանջում է, որ մի քանի ամիսներ անընդհատ աշխատող կառավարչութիւնները արձակուրդ ստանան: Յոգնած, ջղայնացած կառավարչութիւնները վրնասոււմ են դործին, իսկ կառավարչուհու դործը շատ է ջղայնացնող:

Նոյնպէս ուշադրութիւն պէտք է դարձնել կառավարչութիւնների օգնականների հարցի վրայ: Ներկայի բոլոր օգնականութիւնները կիսադրագէտ են, մի մասը ծխական զպրոցների գանադան բաժանմունքներից է. շատերն էլ տարիքով դեռ շատ են դեռահաս:

Դ. Հասարակ ծառայողներ. Որբանոցի հասարակ ծառայողներն են՝ խոհարարը, սրտ օգնականը (ամեն տեղ չկայ), ծառան, մայրապետները (աղտիսին), լուսացարարուհին: Սրանց

մասին այսքանը կարող եմ ասել. շատ որբանոցներում այս ծառայողները կատարելու բան չունին համարեա:

Շատ տեղեր էլ սրանց քանակը մի որբանոցի համար շատ է մեծ: Վարչութիւնները ձգտում են բչացնել հասարակ ծառայողների թիւը: Իմ ներկայութեամբ տեղի ունեցած Դիլիջանի որբանոցների վարչութեան և կառավարչուհիների ժողովում մօտ 15 հասարակ ծառայողներ կրճատուեցին: Ինձ թըլուում է, որ զեռ էլ աւելի կարելի է կրճատել, մանաւանդ եթէ իմ առաջարկի ոչով որբանոցի երեխաններն աւելի աշխատեն, քան մինչև այժմս են աշխատել:

Կրճատումից տնտեսուած փողով կարելի է կառավարչուհիներին աւելի մեծ ոտճիկ տալ և աւելի պատրաստի անձեր այս պաշտօնի համար հրաւիրել:

Իմ տեսած բոլոր որբանոցների հասարակ ծառայողների թիւը 443 հոգի է, որից 279 հոգի տաճկահայեր են, իսկ 164 հոգի սուսահայեր:

Ե. Կանոնադրական հրահանգ ծառայողների համար. Յիշուած ծառայողների պարտականութիւնների և իրաւունքների մասին տարբեր հասկացողութիւններ են իշխում մեր որբանոցներում: Վերջենք կառավարչուհին, մի տեղ նրա պարտականութեան և իրաւունքի մասին լայն, մի այլ տեղ նեղ դատարար ունին, մի տեղ նա տնտես, մի այլ տեղ դաստիարակ, մի այլ տեղ վարիչ է ենթադրուում: Մի տեղ մեծ գնումներ է անում, մի այլ տեղ հինգ ուրբուց աւելի գնել չի կարող: Նոյնը կարելի է ասել նաև միւս ծառայողների մասին: Ով ինչ իրաւունքներ ունի, ինչ պարտականութիւններ, պարզ չէ բնդհանրապէս. և սէտք է ասեմ. որ այդ հոգի վրայ բաւականին վէճեր և անհամաձայնութիւններ են լինում մեր որբանոցների պաշտօնեաների մէջ: Շատ տեղեր ինձ խնդրում էին թիֆլիսից, Կենտրոնական կոմիտէի կողմից մի հրահանգ ուղարկել այս մտքով:

Սա մի շատ պարզ պահանջ է, որին բաւարարութիւն պէտք է տալ. եթէ ուսումնարանները չեն կարող գոյութիւն ունենալ առանց կանոնադրութեան, պարզ է, որ որբանոցներն աւելի ևս նոյն դրութեան մէջ են, և զեռ էլ աւելի կարիք ունին, որովհետև սրանց կեանքն աւելի բարդ է և պաշտօնեաներն աւելի բարդմատեսակեն: Առաջարկս այս է. կազմել ներքին կանոնա-

գրութիւն որբանոցների պաշտօնեաների յարաբերութիւնները պարզաբանող: Այս կերպ որոշ միօրինակութիւն կը մտնի որբանոցների մէջ և՛ աւելորդ վէճերի ու զժգոհութիւնների առաջը կհանուի զոնէ մասամբ:

Սրա վրայ կաւելացնէի և կասէի, որ այդ կանոնադրութեան մէջ խօսք է լինելու նաև որբանոցների ներքին կեանքի, զատարակութեան և դիսցիպլինայի մասին *):

Զ. Պաշտօնեաների որ տեղացի լինելը. Քնդիր է, պաշտօնեաները տաճկահայեր, թէ ուսահայեր են լինելու: Քօսք չը կայ, որ երկուսից էլ կարող են լինել, բայց պէտք է աշխատել այսուհետև արևմտահայերի թիւը մեծացնել ամեն կերպ:

Ներկայում պատկերն այսպէս է,

| | Ռուսահ. | տաճկահ. |
|------------------------------|---------|---------|
| Կառավարչուհի | 39 | 12 |
| Ուսուցիչ | 41 | 65 |
| Հասարակ ծառայողներ | 164 | 279 |
| | <hr/> | |
| Գումար | 244 | 356 |

Այս թուերի մէջ զեռ զգալի փոփոխութիւններ պէտք է լացնել, և այն էլ յօգուտ տաճկահայերի. պէտք է մեծացնել մանաւանդ կառավարչուհիների թիւը:

Զբաղւոք է մոռանանք երկու բան, նախ երեխաներին իրենց զգացումներով, ապրելու և վարուցողութեան եղանակով հոգեբանօրէն աւելի մօտ են տաճկահայերը և ապագայում նըրանք են ապրելու և զործելու երեխաների հետ. ապագայ զոր-

*) Կենտրոնական կոմիտէն կից Որբանոցային յանձնաժողովի առաջարկով՝ 1916 թուի դեկտեմբեր ամսին կազմեցի մի «Նախագիծ կանոնադրութեան զազթականական որբանոցների»: Այս նախագիծը ունի հետևեալ բաժանումները I Որբանոցների նպատակը և կրթական ոգին. II Երեխաներ. III Իպրոց. IV Արհեստանոց. V Քնամակալութիւն. VI Ընդհանուր կառավարիչ. VII Աւագ ուսուցիչ. VIII Ուսուցիչ-ուհի. IX Կառավարիչ-կառավարչուհի. X Քաւր ժողով. XI Մանկավարժական ժողով. XII Ընդհանուր տեսուչ:

Ամեն մի բաժանմունք կազմուած է զանազան յօդուածներից:

Կազմածս նախագիծը Յանձնաժողովի նխատրում քննուելուց յետոյ՝ պէտք է ներկայացուի Կենտրոնական կոմիտէին:

ծունելութեան սկիզբը հէնց այժմեանից պէտք է սկսել: Բացի այդ, տաճկահայ ինտելիգենցիայի մէջ մեծ գառնութիւն է ամբարուած, նրանք մշտապէս զանգատուում են, որ իրենք զործերից հեռացուած են, որ չի լուում նրանց ձայնը, կարծիքը: Ինչ չափերով են այս պնդումները ճիշտ, այժմ քննել չեմ ուզում, բայց չեմ էլ թաղցնելու իմ կարծիքը, որ տաճկահայ ինտելիգենցիայի մէջ ամբարուած այդ դժգոհութիւնն որոշ հիմք ունի:

3. ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄ ԱԿԵԼՊՈՒԹԻՒՆԸ

Յիշուած բարեփոխութիւնները դեռ բաւական չեն. պէտք է բարեփոխութեան ենթարկուին որբանոցների ներքին կազմակերպութիւնը, երեխաների խմբաւորումը, դասաւորութիւնը, ծախսարարութիւնը և այլն: Մքանք ոչ պակաս ուշադրութեան արժանի հարցեր են:

Ա. Որբանոցներ կազմելիս, կամ վերակազմելիս, պէտք է ի նկատի ունենալ ըստ հասակի, սեռի կամ կօջման լատանելու սկզբունքը:

Միանգամայն աննպատակալարմար է երկուսից սկսած երեխաներին պահել մինչև 16—18 տարեկան երեխաների հետ: Փօքրերին (մինչև 6 տարեկան) կերակրելու, հաղցնելու, լողացնելու, կրթելու և դաստիարակելու պայմանները տարբերում են մեծերից: Այս պատճառով էլ ցանկալի է փօքրերին հաւաքել մի առանձին մանկապարտեզ որբանոցում:

Յանկալի է նոյնպէս արհեստներ սովորող երեխաներին առանձնացնել ջոկ որբանոցների մէջ: Արհեստանոց որբանոցների կեանքի ուժիմը, սնունդը և վարչական կազմակերպութիւնը որոշ տարբերութիւններ է ունենալու, օր. կառավարիչը սղամարդ է լինելու, օգնականը՝ կին, ծառայողներ չեն լինելու, բա-

ցի խոհարարից: Մտունդը ուժեղ, արհեստաւորին յարմար է լինելու և այլն:

Որբանոցների կառավարչուհիներից շատշատերը գանձատուում էին ինձ, որ մեծ տղաներին և աղջիկների (արբուհուհի հասած) միասին պահելը փաստակար է:

Ահա հանգամանքներ, որ լուրջ ուշադրութեան արժանի են. բակերը յաճախ շատ մեծ են, վերահսկողութիւնը թոյլ, կառավարչուհին երբեմն տպիկար, առանց հեղինակութեան, երեխաները ոչ լիակատար դաստիարակուած, բայց և հասունացած, բնական է, որ բուսականին ոչ ցանկալի միջնուրրտ է ստեղծուում: Չեմ կարծում, որ մեր որբանոցների գործը մօտիկ ապագայում այնպիսի հիմնական բարեփոխութեան ենթարկուի, որ այս վտանգը վերանայ մէջ տեղից, այդ պատճառով էլ միակ բնական ճանապարհն է մտում հասունացած տղաներին և աղջիկներին ջոկ որբանոցների մէջ կենտրոնացնել, մանաւանդ որ այդ մեծերը արհեստներ են սովորնլու, իսկ ինչպէս յիշեցի, արհեստաւորներին պէտք է առանձնացնել ջոկ որբանոցների մէջ: Այս բաժանումների ժամանակ եզրայր ու քոյր լինելու հանգամանքը պէտք է ի նկատի ունենալ և այդ հարցին զգուշութեամբ մօտենալ:

Մի քանի տեղեր թոյլ չափերով իրականացուած է այս սկզբունքը. երևանում կան մեծ տղաների և աղջիկների երկու տարբեր որբանոցներ, Ալէքսանդրապոլում մէկ աղջկանց որբանոց (30 հոգի), Դիլիջանում արհեստաւորների երկու որբանոցներ (տղաների) և մէկ էլ մեծ, բայց դպրոցական տարիքի աղայոց որբանոց: Ուրեմն իմ տեսած 55 որբանոցներից 6 հատը ըստ հասակի և կոչման է բաժանուած, իսկ 49 հատ որբանոցի մէջ դեռ 2 տարեկանից սկսած երեխաները ապրում են մինչև 17—18 տարեկանների հետ խառն:

Բ. Ուշադրութեան արժանի հարց է նաև որբանոցներում որոշ քանակով երեխաներ տեղաւորելու հարցը. դաստիարակութեան գործը յաջողութեամբ առաջ տանելու համար, պէտք է երեխաների կուտակումը մի որբանոցի մէջ մեծ չըլինի. 50 հոգին պէտք է համարել ցանկալին, իսկ 100-ից աւելին՝ անտանելի:

Բնական է, որ շէնքերի հարցը ամենամեծ արգելքն է այս բարեփոխութեան գէմ. չեն պատահում յարմարաւոր շէնքեր: Գտնուում է ազատ մի շէնք, ուր կարող են տեղաւորուել

100-ից աւելի հոգի, բնական է, որ այդ նպայմանում յիշուած պահանջի մասին մտածելն անկարելի է: Հնարաւորութեան դէպքում ուղիցոյց պէտք է ունենալ յիշուած սկզբունքը:

Ներկայում մեր որբանոցները երեխաների քանակի տեսակէտից հետեւալ պատկերն են ներկայացնում.

20 որբանոց ունին մինչև 55 երեխայ:

18 » » 55—100 »

16 » » 100-ից աւելի:

Անա թուեր, որոնք կերպարանափոխութեան կարիք ունին զեռ: Նկատել եմ, որ փոքրաքանակ որբանոցներում երեխաներն աւելի են դատարարակուած երեւում:

Կ. Որբանոցների աչքի ընկնող սակագութիւններից մէկն է նաև զբաւոր զարծազարուբեան թերութիւնը: Կան որբանոցներ, որտեղ համարեա ոչ մի թուզթ չկայ, որով կարելի լինի գաղափար կազմել որբանոցի անցեալի և ներկայի մասին. օր. սի է եղել առջ կառավարչուհին, յետոյ ով: ինչո՞ւ է փոխուել. քանի երեխայ է եղել, յետոյ ինչպէս է պակասել կամ աւելացել երեխաների քանակը, սիքեր են եղել ուսուցիչները, ի՞նչ դասեր են տուել, ի՞նչ ուճիկ են ստացել և այլն: Այս և նման հարցերի պատասխանները ստանալու համար անագին դժուարութիւններ եմ քաշել, նոյն իսկ շատ անգամ անհնար է եղել մի բան իմանալ:

Պէտք է որոշել, թէ ինչ պոքեր պէտք է լինեն զբաւոր, պէտք է պահանջել, որ ամեն մի որբանոց ունենայ պահանջուած զբաւոր պոքձավարութիւն:

Դ. Մախտարարութիւնը որբանոցներում զանազան կերպ է լինում. մէկ տեղ առանձին ծախսարար կայ, մի այլ տեղ խընամակալը կամ կառավարչուհին է գնումներ անում, մի այլ տեղ՝ ամբողջ վարչութիւնը: Մի տեղ բոլոր գնումների համար ջրկէջով փաստաթղթեր կան, մի այլ տեղ մանր ծախքերը միացրած է մի փաստաթղթի մէջ, մի տեղ հաշուապահական որոշ ձևեր կան հաշուէմտեանների մէջ, մի այլ տեղ չլիան, մի տեղ հաշիւները բաժանուած է կատեգորիաների այս կերպ, մի այլ տեղ՝ այլ կերպ:

Այս բոլորը ցոյց են տալիս, որ կարիք կայ կենտրոնում կազմակերպելու մասնագետները խորհրդակցութիւն, ուր քննութեան է առնուելու, գնումների, և առ հասարակ ծախսարարութեան և հաշուապահութեան խնդիրները, զալով կզրակացութեան: Եւ ապա ընդունուած կէտերը, իրրև պահանջներ,

ուղարկուելու են որբանոցների վարչութիւններին գործադրութեան համար:

Ե. Որբանոցներում լաւ չի պահուում ինվենտարի ցուցակագրման գործը. ճիշտ է, ինվենտարի ցուցակագրման թղթեր պատահում են, բայց զբանցից շատ բչերն են պաշտօնապէս վարչութիւնների կողմից վաւերացրած, մեծ մասամբ անստորագիր թղթեր են, և ամեն բան կիսատ պատ նշանակած: Այդ թղթերի վրայ չի արձանագրած, թէ ինվենտարը ցուցակագրելուց յետոյ ի՞նչ բաներ են կորել, ի՞նչ բաներ փչացել, ի՞նչ նոր բաներ են աւելացել և այլն:

Բացի այդ, ինվենտարի պաշտօնական ստուգութիւն համարեա չի լինում. բնական է, քանի որ պաշտօնական թղթեր չկան, չեն էլ լինիլ պաշտօնական ստուգութիւններ:

Անհրաժեշտ է կարգադրել վարչութիւններին, որ ցուցակագրեն որբանոցի ինչքը: Այդ թղթի տակ ստորագրելու են վարչութեան անդամները կամ խնամակալները: Կառավարչուհին այդ թղթով պէտք է ստանայ որբանոցի ինվենտարը և այդ թղթի հիման վրայ էլ պէտք է յանձնի վարչութեան պաշտօնից հեղանալիս: Այդ ցուցակագրման թղթի մի պատճէնը պէտք է ուղարկել կենտրոնական վարչութեան: Պարբերաբար կատարուող ստուգութիւնների արդիւնքների մասին պէտք է տեղեկացնել կենտրոնական կազմակերպութեանը պաշտօնական թղթով:

Զ. Մերանոց. Գնումների գործը թեթեացնելու համար, ցանկալի է շատ որբանոցներ ունեցող տեղերում հիմնել տեղական մթերանոց, ինչպիսին կայ Դիլիջանում: Բացի այդ, ցանկալի է շորեղէնի, կօշկեղէնի և այլ անհրաժեշտ իրերի համար կենտրոնական մթերանոց ունենալ Թիֆլիսում բոլոր ընկերութիւնների որբանոցների համար: Այս կերպ նիւթեր աւելի դիւրութեամբ կը ճարուեն և աւելի արժան կը նստեն:

Է. Կենտրոնացում. Բարեփոխութեան այս առաջարկները հեշտութեամբ իրականութիւն կը գտնեն, եթէ որբանոցները կենտրոնական որոշ վայրերում: Որբանոցները պէտք է տեղաւորել գիւղերում, կամ գիւղական բնոյթ ունեցող գաւառական քաղաքներում: Այժմեան տեղերից յարմար են՝ Ալէքսանդրապոլը, Դիլիջանը, Աշտարակը, Ախալցխան, Նոր-Բայազէտը (թէ և մի փոքր հեռու է): Եթէ Գանձակում, Երեանում Իգդիրում Էջմիածնում, Թիֆլիսում որբանոցներ դեռ լինելու են,

այն դէպքում այդտեղի երեխաներին ամառները պէտք է տեղափոխել ամառանոցներ: Երեխաները սովոր չեն այս տեղերի տաք կլիմային: Այդ տեղերից միմիայն Գանձակի որքանոցներն էին այս տարի փոխադրուել ամառանոց:

Իմ կարծիքով մի որքանոց բանալ այստեղ, մի ուրիշը այնտեղ, հաղորդակցութեան ճանապարհներից դուրս հիմնել և յաճախակի կոնսորտից ազատ թողնել որքանոցները, ցանկալի չէ: Որքանոցները պէտք է կենտրոնացնել: Այդ պայմաններում հնարաւոր է լինում նշանակել ընդհանուր կառավարիչ, արհեստներ մտցնել, կենտրոնական կանոնաւոր գպրոց պահել, կազմակերպել կառավարչուհիների և ուսուցչուհիների և ուսուցիչների խորհրդակցութիւններ: Այս ուղղութեան բաւականին գործ կայ անելու:

Այժմ որքանոցներ այսպէս են խմբաւորուած՝ Թիֆլիս 9 հատ, Իլիլժան՝ 11, Երևան՝ 7, Էջմիածին՝ 2, Գանձակ՝ 2, Ղարաբիլիսա՝ 2, Ախալքալակ, Ախալցխա, Ղարս, Քարվանսարա, Ախտա, Իզդիր մէկական, Բարու 6 հատ:

Մինչև այժմ կատարածս գիտազութիւնները ցոյց են տալիս, որ որքանոցների գործի մէջ պէտք է զգալի փոփոխութիւններ մտցնել: Ասկաջն իմ կարծիքով այս հիմնական հարցերի լուծմանը անցնելուց առաջ, պէտք է որքանոցների գործիչների խորհրդակցութիւն հրաւիրել, եթէ ներկայացուցիչներ լինին բոլոր ընկերութիւնների կողմից, լաւ իսկ եթէ առ այժմ այդ բանը անհնար է, այն դէպքում կենտրոնական կոմիտէի և Բարեգ, ընկերութ. որքանոցներից կարելի է ներկայացուցիչների խորհրդակցութիւն կազմել. իսկ եթէ այս էլ անհնար է, գոնէ այս գործով հետաքրքրուող թիֆլիսաբնակ գործիչներից կազմակերպել է հարկաւոր այդ խորհրդակցութիւնը: Գործի շահը այդ է պահանջում:

Այս անցնող տարին նախապատրաստութեան, երեխաների ֆիզիքական գոյութիւնը ապահովելու շրջանն էր, այժմ պէտք գայ քաղմակոզմանի և լուրջ գործունէութեան տարին: Հայ հասարակութեան ամեն մի գիտակից անգամ իր կարեցածի շափ պէտք է օգնէ այս գործի լիակատար ծագկանը: Մեր յոյսերը մարմնացող ուժերի մի աչքի ընկնող մասը որքանոցներումն է տեղաւորուած: Ահա մի հանդամանք, որ միշտ աչքի առաջ պէտք է ունենանք:

ՈՐ ԲԱՆՈՅՆԵՐԻ ԵՐ ԵԽԱՆՆԵՐԸ

| ՏԵՂԸ Թիֆլիս | 1—3 | | 4—6 | | 7—10 | | 11 և աւելի | | Բոլորը | | Վերջ |
|----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|---------|---------|------|
| | տար. տղ.աղջ. | տղ.աղջ. | տղ.աղջ. | |
| Կանանց կոմ. | 1 | 2 | 5 | 2 | 8 | 11 | 6 | 13 | 20 | 28 | 48 |
| Կանանց կոմ. | 4 | 3 | 3 | 3 | 5 | 4 | 1 | 6 | 13 | 16 | 29 |
| Տուրինեանի | — | — | 8 | 3 | 9 | 24 | 21 | 52 | 38 | 79 | 117 |
| Թայիբեանի | — | 1 | 2 | 2 | 6 | 15 | 4 | 9 | 12 | 27 | 39 |
| Օրիորդաց կոմ. | — | — | 6 | 11 | 18 | 13 | 14 | 18 | 38 | 42 | 80 |
| Աստրախանի | — | — | 4 | 5 | 12 | 12 | 4 | 13 | 20 | 30 | 50 |
| Միքանաօրի | 1 | 2 | 6 | 14 | 24 | 22 | 64 | 43 | 95 | 81 | 176 |
| Նպաստամատ. | — | — | 7 | 6 | 33 | 25 | 28 | 21 | 68 | 52 | 120 |
| Միս, համայնք | — | 1 | 11 | 8 | 26 | 14 | 20 | 4 | 57 | 27 | 84 |

Բոլորը 6 9 52 54 141 140 162 172 361 382 743

Դիլիջան

| | | | | | | | | | | | |
|--------------|---|---|----|----|----|----|----|----|----|----|-----|
| № 1 | — | — | 5 | 5 | 16 | 31 | 21 | 55 | 42 | 91 | 133 |
| № 2 | — | — | 10 | 20 | 31 | 30 | 28 | 44 | 69 | 94 | 163 |
| № 3 | — | — | — | — | — | — | 45 | — | 45 | — | 45 |
| № 4 | — | — | 5 | 4 | 22 | 13 | 26 | 19 | 53 | 36 | 89 |
| № 5 | 1 | — | 4 | 5 | 10 | 20 | 20 | 4 | 35 | 29 | 64 |
| № 6 | 3 | — | 1 | 9 | 9 | 6 | 8 | 21 | 21 | 36 | 57 |
| № 7 | — | — | 2 | — | 13 | 11 | 10 | 17 | 25 | 28 | 53 |
| № 8 | — | — | — | — | — | — | 24 | — | 24 | — | 24 |
| № 9 | — | — | 2 | 1 | 12 | 8 | 12 | 30 | 26 | 39 | 65 |
| № 10 | — | — | 1 | 3 | 1 | — | 8 | 3 | 10 | 6 | 16 |
| Ազար.արհեստ. | — | — | — | — | — | — | 34 | — | 34 | — | 34 |
| Հիւանդանոց | 1 | — | 1 | 2 | 1 | 8 | 7 | 4 | 10 | 14 | 24 |

Բոլորը 5 — 31 49 115 127 243 197 394 373 767

| Տեղը | 1—3 | | 4—6 | | 7—10 | | 11 և աւելի | | Բոլորը | | |
|-----------------|----------|----------|-----------|-----------|------------|-----------|------------|-----------|------------|------------|------------|
| | տար. | տար. | տար. | տար. | տար. | տար. | տար. | տար. | տղ.աղջ. | տղ.աղջ. | |
| Նոր-Բայազետ | | | | | | | | | | | |
| Բարեգ. Ընկ. № 1 | 1 | 1 | 10 | 4 | 57 | 26 | 40 | 7 | 108 | 38 | 146 |
| » № 2 | 1 | — | 5 | 3 | 10 | 13 | 9 | 7 | 25 | 23 | 48 |
| » № 3 | 3 | 1 | 3 | 4 | 14 | 9 | 10 | 2 | 30 | 16 | 46 |
| Եղբայր. օգն. | — | — | 3 | 1 | 21 | 13 | 30 | 12 | 54 | 26 | 80 |
| Բոլորը | 5 | 2 | 21 | 12 | 102 | 61 | 89 | 28 | 217 | 103 | 320 |

Ալտարակ

Մոսկ. հայկ. կոմ.

| | | | | | | | | | | | |
|---------------|----------|----------|-----------|-----------|------------|-----------|------------|-----------|------------|------------|------------|
| № 1 | — | — | 2 | 4 | 14 | 14 | 8 | 11 | 24 | 29 | 53 |
| № 2 | 1 | — | 7 | 10 | 26 | 16 | 25 | 16 | 59 | 42 | 101 |
| № 3 | 1 | 2 | 5 | 8 | 16 | 15 | — | 4 | 22 | 29 | 51 |
| № 4 | — | — | 1 | — | 8 | 2 | 26 | 13 | 35 | 15 | 50 |
| № 5 | 1 | 3 | 26 | 10 | 38 | 33 | 53 | 38 | 118 | 84 | 202 |
| Բոլորը | 3 | 5 | 41 | 32 | 102 | 80 | 112 | 82 | 258 | 199 | 457 |

Էջմիածին

| | | | | | | | | | | | |
|-----------------|----------|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|------------|------------|------------|
| Եղբայրակ. օգն. | 2 | 3 | 13 | 15 | 21 | 33 | 63 | 43 | 99 | 94 | 193 |
| Նիս. Զբոսի սրբ. | — | — | — | — | 16 | 14 | — | — | 16 | 14 | 30 |
| Բոլորը | 2 | 3 | 13 | 15 | 37 | 47 | 63 | 43 | 115 | 108 | 223 |

Երեւան

Եղբայր. օգն.

| | | | | | | | | | | | |
|---------------|----------|----------|-----------|-----------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|
| № 1 | 1 | — | 1 | 5 | 4 | 16 | 2 | 71 | 8 | 92 | 100 |
| № 2 | — | 2 | 12 | 6 | 17 | 16 | 1 | 7 | 30 | 31 | 61 |
| № 3 | — | — | — | — | 15 | — | 40 | — | 55 | — | 55 |
| № 4 | 1 | — | 6 | 6 | 18 | 20 | 10 | 19 | 35 | 45 | 80 |
| № 5 | 2 | 1 | 10 | 7 | 34 | 13 | 45 | 6 | 91 | 27 | 118 |
| № 6 | — | 2 | 11 | 13 | 27 | 30 | 3 | 19 | 41 | 64 | 105 |
| Բարեգ. Ընկ. | — | — | 2 | 6 | 3 | 9 | 4 | 5 | 9 | 20 | 29 |
| Բոլորը | 4 | 5 | 42 | 43 | 118 | 114 | 105 | 127 | 269 | 279 | 548 |

| ՏԵՂԸ | 1—3 | | 4—6 | | 7—10 | | 11 և աւելի | | Բոլորը | | Ընդամենը |
|-----------------|---------|---------|---------|---------|---------|---------|------------|---------|---------|---------|--|
| | տար. | տար. | տար. | տար. | |
| Ալեքսանդրապոլ | տղ.աղջ. | տղ.աղջ. | տղ.աղջ. | տղ.աղջ. | |
| Բարեկ. Ընկ. № 1 | — | 2 | 5 | 8 | 16 | 13 | 12 | 4 | 33 | 27 | 60 |
| » № 2 | 4 | 1 | 7 | 1 | 36 | 7 | 33 | 1 | 80 | 10 | 90 |
| Կենտր. կոմ. № 1 | — | — | 1 | — | 7 | 5 | 12 | 4 | 20 | 9 | 29 |
| » № 2 | 1 | 4 | 4 | 2 | 4 | — | 8 | 13 | 17 | 19 | 36 |
| » № 3 | — | — | — | — | — | 17 | — | 16 | — | 33 | 33 |
| Միաց. Ընկ. № 1 | — | — | 1 | 2 | 6 | 7 | 11 | 4 | 18 | 13 | 31 |
| » № 2 | — | — | 4 | 3 | 20 | 6 | 18 | 14 | 42 | 23 | 65 |
| Բոլորը | | | | | | | | | | | 5 7 22 16 89 55 94 56 210 134 344 |
| | | | | | | | | | | | Հիւանդ 50 |
| | | | | | | | | | | | 394 |

| Գանձակ | Գաղթ. կոմ. | | Բար. Ընկ. | | Բոլորը | | Ընդամենը | | Ընդամենը | | |
|--------------------------------------|------------|---|-----------|---|--------|----|----------|----|----------|----|----|
| | 4 | — | 2 | 5 | 25 | 11 | 19 | 19 | 50 | 35 | 85 |
| | 2 | 1 | 1 | 2 | 14 | 11 | 14 | 14 | 31 | 28 | 59 |
| 6 1 3 7 39 22 33 33 81 63 144 | | | | | | | | | | | |

Ախալցխա Բար. Ը.— 3 12 6 28 7 31 7 71 23 94

Ախալքալակ Բար. Ը.— 3 7 9 35 19 34 18 76 49 125

Ղարաքիլիսա

| | | | | | | | | | | | |
|---------------|----------|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|------------|------------|
| Պատարագի կոմ. | 4 | 3 | 15 | 16 | 40 | 42 | 17 | 28 | 76 | 89 | 165 |
| Տիկ. Քալիբանի | — | — | — | — | 1 | 21 | — | 1 | 1 | 22 | 23 |
| Բոլորը | 4 | 3 | 15 | 16 | 41 | 63 | 17 | 29 | 77 | 111 | 188 |

Ղարս Բար. Ընկ. — — 2 4 14 7 7 5 23 16 39

Քարվանսարա Բար. Ը.— 3 12 16 25 28 16 11 53 58 111

Իգգիր

Եղբայր. օգն. 1 1 1 6 9 14 14 11 25 32 57

Ախտա

Եղբայր. օգն. 4 — 16 25 33 21 29 22 82 68 150

| Տեղ | 1—3 | | 4—6 | | 7—10 | | 11 և աւելի | | բոլորը | | |
|-----------------|--------------|----|--------------|-----|--------------|-----|--------------|-----|---------------|------|------|
| Բարում | տար. աղ.աղջ. | | տար. աղ.աղջ. | | տար. աղ.աղջ. | | տար. աղ.աղջ. | | աղ. աղջ. ամբ. | | |
| Բար. քնկ. | 3 | 10 | 6 | 3 | 14 | 7 | 23 | 7 | 46 | 27 | 73 |
| Բազու | | | | | | | | | | | |
| Բազ. գողթ. կոմ. | | | | | | | | | | | |
| № 1 | — | — | 1 | 1 | 7 | 2 | 23 | 7 | 31 | 10 | 41 |
| № 2 | — | — | — | 7 | 20 | 8 | 21 | 44 | 41 | 59 | 100 |
| № 3 | — | — | 1 | 8 | 5 | 7 | 8 | 19 | 14 | 34 | 48 |
| № 4 | — | — | 5 | 7 | 9 | 18 | 9 | 18 | 23 | 43 | 66 |
| № 5 | — | — | — | — | — | — | 20 | — | 20 | — | 20 |
| Աւետար. համ. | — | — | — | — | 5 | 4 | 7 | 5 | 12 | 9 | 21 |
| Բոլորը | — | — | 7 | 23 | 46 | 39 | 88 | 93 | 141 | 155 | 295 |
| Սանահին | | | | | | | | | | | |
| Կենտր. կոմ. | 5 | 4 | 12 | 13 | 40 | 28 | 29 | 36 | 86 | 81 | 167 |
| <hr/> | | | | | | | | | | | |
| Բոլ. տրբանոց | 53 | 59 | 315 | 349 | 1028 | 869 | 1189 | 984 | 2585 | 2261 | 4896 |

1916 թուի ամսան Անդրկովկասում գոյութիւն ունեցող բոլոր որթանոցներում ուրեքն կային 1—3 տարեկան՝ 53 տղայ և 59 աղջիկ, 4—6 տարեկան՝ 315 տղայ և 349 աղջիկ, 7—10 տարեկան՝ 1028 տղայ և 869 աղջիկ, 11 և աւելի տարեկան՝ 1189 տղայ և 984 աղջիկ: Միասին 2585 տղայ և 2261 աղջիկ, բոլորը միասին 4846 երեխայ, սրա վրայ աւելացրած Ալեքսանդրապոլի հիւանդանոցի 50 երեխան, որ ըստ տարիքների չի բաժանած, կըստացուի բոլորը 4896 երեխայ:

ՏԵՂԸ

| ՏԵՂԸ | Քանիքը | Կայրուհիների համար | Քանիքը | | | Միասին | | | Կենտրոն | |
|----------------|--------|--------------------|--------|-----|-----|--------|-----|------|---------|----|
| | | | Քմ | Քմ | Քմ | Քմ | Քմ | Քմ | | |
| | | | | | | | | | | Քմ |
| Գրքեր | 3 | 7 | 296 | 45 | 26 | 218 | 149 | 367 | 7 | 1 |
| Քարտեզներ | 3 | — | 36 | 1 | 6 | 24 | 19 | 43 | 1 | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 4 | 2 | 122 | 11 | 4 | 121 | 21 | 142 | 1 | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 4 | 3 | — | 47 | 21 | 68 | — | 2 |
| Քարտեզներ (Քմ) | 1 | — | 32 | — | — | 20 | 12 | 32 | — | 2 |
| Քարտեզներ (Քմ) | 5 | 3 | 115 | 38 | 23 | — | — | 198 | — | 12 |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | — | — | — | — | — | 21 | — | 4 |
| Քարտեզներ (Քմ) | 3 | 6 | — | — | — | — | — | 180 | 8 | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 3 | 4 | — | — | — | — | 30 | 30 | 2 | — |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 129 | 26 | 20 | 92 | 83 | 175 | 3 | 5 |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 48 | 17 | — | 38 | 27 | 65 | 1 | — |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 15 | 40 | — | 31 | 24 | 55 | 1 | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 1 | — | 32 | — | — | — | — | 32 | — | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 64 | 22 | — | — | — | 6 | — | 3 |
| Քարտեզներ (Քմ) | 2 | — | 12 | 7 | — | — | — | 19 | — | 4 |
| Քարտեզներ (Քմ) | 3 | — | 13 | 3 | 1 | 17 | — | 17 | — | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 3 | — | 14 | 6 | 6 | 16 | 10 | 26 | — | 1 |
| Քարտեզներ (Քմ) | 4 | 13 | 311 | 105 | 28 | 241 | 270 | 511 | 9 | 18 |
| Քարտեզներ (Քմ) | 4 | 2 | 116 | 34 | 23 | — | — | 196 | 9 | 3 |
| Քարտեզներ (Քմ) | 3 | 2 | — | — | — | — | — | 120 | 1 | 2 |
| Քարտեզներ (Քմ) | — | — | 1400 | 378 | 187 | 865 | 666 | 2383 | 43 | 63 |

Այս վիճակագրութիւնից երևում է հետեւեալը. Ա. բաժ. 1915/16 ուս. տարում եղել են 1400 երեխայ, Բ. բաժ. 378, Գ. բաժ. 187 հոգի, Դ- և Ե. բաժ. 67 հոգի, 351 աշակերտի որ բաժանմունքներում եղած լինելն անկարելի էր ստուգել: Բոլորը միասին եղել են՝ 2283 աշակերտ: Աշակերտութեան մի մասի որ սեռին պատկանելը նոյնպէս չի կարելի ամեն տեղ որոշել: Դ. բաժանմունքներում սովորել են՝ նոր-Քայազատի որբանոցում՝ 5 հոգի, Թիֆլիսում՝ 17 հոգի, Բաքու՝ 23 հոգի, Երևանում Դ. և Ե. բաժանմունքներում՝ 22 հոգի,


եղել են 43 ուսուցիչ և 63 ուսուցչուհի, - միասին՝ 105.

Այս ուսուցիչներից 41 հոգի ուսահայեր են, որոնցից ձրիարար պարապել են 6 հոգի, 65 հոգի աստիճանայի են եղել:

Մի քանի որբանոցներ (4 հատ) ունեցել են մանկապարտէզներ, ուր սովորել են մօտ 100 երեխայ:

Որբանոցներից շատերում դպրոցական պարապմունքներ չեն եղել: որովհետև բացուել են 1916 թուի ամառուայ ամիսներ ընթացքում:





371.95

5-16

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՑՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԸ

- | | |
|---|-------|
| 1. Kritik der Zillersehen Formalstufentheorie | 50 Կ. |
| 2. Քննադատութիւն Յիլլէրի ձեռակ. առաջ ճաննեբի | 50 Կ. |
| 3. Դասաւանդման ձեւեր | 50 Կ. |
| 4. Դասաւանդման խնդիրներ | 65 Կ. |
| 5. Շանթի Հին Աստուածները | 15 Կ. |
| 6. Սեզրաք Մանդլինեան | 20 Կ. |
| 7. Գաղթականական որբանոցներ | 25 Կ. |

Մեկ օրինակ

Գինն է 25 ԿՈՊ

